

Բաժանորդագիրն կԱՆԻՏԻԿ Թուրքիոյ համար
տարեկան 50 դրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի.
ուրիշ երկրներու համար 12 ֆր.
Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու-
թիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակադրոշմ
կ'ընդունուի: 1 զրշ.նոցը 34 փարայի հաշ-
ւով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ:
ԾԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար
դիմել

Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Դ. ՓԱՆԱԳՆԱՇԵԱՆ
Պոլիս, Պաշէ-Գաբու, Թաշխան, քիւ 50

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Գ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاند
ه نومروده «زاغيك» غزتهسى مديرى
بالاقاشيان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻԻ 17

ՇԱԲԱԹ

8 ՓԵՏՐՈՒԱՐ 1892

ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԾԱՂԻԿԻ Տնօրէնութիւնը պատիւ
ունի ծանուցանել իւր ընթերցողաց
թէ, գոհացումն տալու համար այն
խնդրանաց զորս յաճախ կ'ընդունի,
հաստատած է Յանձնակատարութեան
Գրասենեակ մը:

Յանձնակատարութեան Գրասենեակը
կը հայթայթէ մեծ և փոքր քանա-
կութեամբ ամէն տեսակ ապրանք
թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հը-
րապարակներէն գնելի, ինչպէս,
գիրք ամէն լեզուաւ, պատկերք,
ձայնագրութիւնք, դպրոցական և
գրասենեակի պիտոյք, ժամացուցի,
տպարանական և այլ արհեստական
գործիք, կտաւեղէնք, ասուեղէնք,
ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ
կարասիք, և այլն, և այլն:

Վճարմունք կանխիկ են, բայց ի
հարկին կարելի է պայմանաժամաւ
եւս գործել այն տանց հետ որ կըր-
նան արտադրիչներն ապահովել: Փո-
խադրութեան ծախք կը պատկանին
յաճախորդաց:

Յանձնակատարութեան Գրասենեակը
կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներ-
քին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օ-
տար հրապարակաց վրայ: Առ այդ
կը բաւէ շրկել վաճառելի ապրա-
նաց նմոյշները:

Յանձնակատարութեան Գրասենեակը
կը փափագի ունենալ թղթակիցներ
գաւառական քաղաքներու մէջ:

Թղթակցութիւնք պէտք է ուղ-
ղուին առ Յ. Գ. Փալապաշեան, Կ.
Պոլիս, Պահչէ-Գաբու, Թաշխան,
թիւ 50:

FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԲԱՒԱՒՈՐ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆ ԱՅ ՎԱՃԱՌՍՏՈՒՆ

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՀԱՄԱՅՆ ԵՒՐՈՊ. ԹՈՒՐԿԻՈՅ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻՈՅ ԵՒ ԵՂԻՊՏՈՍԻ ՄԷՋ

ՖՐԱԹԵԼԼԻ ԿՈՆՏԷՆՊԵՐԿԻ

Այս վաճառատուն կը յանձնարարուի հաւարալուծեան և ամէն մրցման
կրնայ դիմադրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբ, պատրաստութեան
տոկունութեամբ, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կարուածքովը:

ԳԼԽԱՒՈՐ ՄԹԵՐԱՆՈՅԹ Ի Կ. ՊՈԼԻՍ

Թիւնէլի քով Թիւ 2, եւ Քարաքէոյի Կամուրջին գլուխը Թիւ 28

ՄԵԾԱՌԱՅԱԿ ԵՒ ՓՈՒՐԱՌԱՅԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

Հոռոտոս, Քափալա, Ռուսնուք, Զմիւռնիա, Վառնա, Պուրկաս, Փիլիպէ,
Բոր-Սալտ, Սելանիկ, Սամսոն, Մերսին, Քիոս, Թարսուս, Ատանա, Պէրութ,
Դամասկոս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Աքեա, Ալեքսանդրիա, Դահիլէ,
և այլն, և այլն:

PAPETERIES DE VIDALON

Թ Ղ Թ Ե Ղ Ի Ն Ա Ց

ՄԵԾ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՎԻՏԱԼՈՆԻ

Հիմնեալ 1597 ին յ'Աննօնէ

Դրամագլուխ 3,150,000 Փրանք:

Կ'արտադրէ տարին 3,000,000 քիլօկրամէն աւելի

Ներկայացուցիչ Հանրի Ժարտօն, Պարնաթան խան



Գրասենեակի և տպագրական զանազան տեսակ ընտիր թուղթեր, գծագրու-
թեան թուղթ սպիտակ և զանազան գոյներով, ծծուն թուղթեր, զանազան
տեսակ ստուարաթղթեր (մուխափա), լուսանկարչական թուղթեր, մագաղա-
թանման թուղթեր, նամակաց պահարաններ, և այլն, և այլն:

«ԾԱՂԻԿ» կը տպագրուի Վիտալոնի գործատան մէջ պատրաստուած թուղթի
վրայ: — Մանրամասն տեղեկութեանց և յանձնարարութեանց համար դիմել
«ԾԱՂԻԿ» խմբագրատունը:



MAISON PHÉNIX

Բերա, Բասաժ տիւ թիւնէլ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Շապկեղինաց, ձերմակեղինաց, Բրդեղինաց



Վաճառատունս կը յայտարարէ իւր բազմաթիւ յաճախորդաց թէ, Բնանսիի և Բիւմպէրիի աշխարհածանօթ գործատուներէն ի նորոյ ստացած է մեծ քանակութեամբ վերջին նորածեղութեանց համաձայն շինուած՝ արանց, կանանց և մանկանց համար պատրաստ հագուստեղէններ, օժիտի համար բազմաթիւ ձերմակեղէններ, կնուքի համար մանկանց զգեստներ և այլ ամէն տեսակ ապրանքներ:

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ.

	Հար.
Շապկի կտակեայ	Հատը 14 Էն 47 1/2
» գունաւոր տպածոյ	» 10 Էն 28
» Փանէլա	» 21 Էն 42
» գիշերանոց	» 12 Էն 27
Անդրապարտիկ	» 10 Էն 21
» մատամբօլ	» 15 Էն 22
Օձիք կտակեայ	տուզինան 17 Էն 54
Թեւնոց	» 29 Էն 65
Թաշկինակ այլ և այլ տեսակ	» 14 Էն 135
Գուլպաներ՝ ֆիլ տիքօս, բամպակեայ, մետաքսեայ, բրդեայ	» 29 Էն 145
Փողկապ այլ և այլ տեսակ	տուզինան 3 Էն 19 1/2

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ.

	Հար.
Շապկի՝ լաւ տպածոյ, գիւմպէրու, պրօտրիլով	Հատը 15 Էն 27
» » » տանթեկայով	» 18 Էն 31
Վարտիկ » » » »	» 14 Էն 22
Վարտիկ » » » պրօտրիլով	» 11 Էն 24
Միսօ » » » »	» 20 Էն 38
» » » տանթեկայով	» 25 Էն 65
Քօրսէ՝ Բարիլի կուրտէ գործատան	» 26 Էն 70
Քօրսաժ բամպակեայ, մետաքսեայ	» 11 Էն 26
Փանէլա լաւագոյն տեսակէն	» 15 Էն 40

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ ամէն տեսակ զգեստեղէնք և ձերմակեղէնք:

	Հար.
Սեղանի սփռոցներ գունաւոր՝ 6 անձեւոցով	20 Էն 39
» » գունաւոր 6 և 12 »	65 Էն 145
Անկողնոյ ծածկոցք մէթրը	9 Էն 17
Գուլպայ՝ ֆիլ տիքօս, բրդեայ, բամպակեայ	տուզինան 40 Էն 145
Կտաւ Վիլիի, մէթրը	3 Էն 5
Սպիտակ տպածոյ՝ լաւագոյն տեսակէն	2 Էն 5 1/2

Եւ ուրիշ ամէն տեսակ ապրանքներ

Յանձնարարութեանց համար պէտք է գրել «Ծաղիկ» Յանձնակատարութեան Գրասենեակին:

9-52

Նիքօլա Անտիօնի

ԼՈՒՍԱՆԿԱՐԻԶ

Ի Պոլս, Սուլթան Պայպիտ, Գէօքֆիլէր պաշը, Թիւ 99

Լուսանկարչատան մէջ կը պատրաստուին ամէն տեսակ լուսանկարներ՝ եւրոպայէ նոր հասած բազմաթիւ նորահար գործիչներով, Պ. Ն. ԱՆՏՐԻՍՈ. Մէնժ ինքն անձամբ կը հանէ իւր բազմաթիւ յաճախորդաց պատկերները: Յաճախորդներն կատարելապէս գոհացնելու համար, յանձնարարուած լուսանկարներու ՕՐԻՆԱԿը ցոյց կը տրուի նախապէս, և եթէ չհաւանութիւն կրկին անգամ կը լուսանկարուի, մինչև որ հաւանութիւն գիշտուի ինքն մը զոր մայրաքաղաքիս ոչ մի լուսանկարիչ յանձնակատար: Կազմարարեմք մեր բազմաթիւ յաճախորդաց որ, ինչպէս յստակ և պայծառ օրեր, նոյնպէս և ամպոս և մառախլապատ օրեր լուսանկարք կը հանուին ամենայն յաջողակութեամբ: Հնորէի նոր դիւանները, կը խնդրուի զգուշանալ կարգ մը նորեկ լուսանկարիչներէ որք կը գործեն մեր անուամբ:

3-12

ԼՆՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ

(Ընտանեաց ապագայն)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱՍՉՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱԿԼԻՈՑ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ կառավարութեան

Կեդրոնատեղի՝ 61, Բէֆուպլիք փողոց, Լիւն (Ֆրանսա)

Առհարձութեամբ գրաւուած 100.000 000 ֆր.

ԼՆՎԸՆԻՌ ՏԷ ՖԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, որ հաստատուած է նպատեւրու համար փոքր խնայողութեանց, արագ զարգացում մը ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերականգնել գրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնք բազմաթիւ են, ինչպէս շարժական արժէքի և փոխ տրուած գրամագլխոց ապահովագրութիւն, կորուսեալ գրամագլխոյ մը վերականգնութիւն, երաշխաւորութիւնք և Գլխավճարք՝ փոխառութեանց և ճարտարութեանց և վաճառականութեան մէջ գործածուած դրամագլխոց, մանկանց համար օժիտք, հանգստեան սնտուկ ծերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն: Ընկերութեան Պիւսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 1էն:

Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար դիմել առ Բարսեղ Էֆէնտի Թէլլաեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Պահճէ-Գարու, Շէյխ-Իսլամ խան, Թիւ 11:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Բաւարան Ֆրանսէի Հայաշխարհի, ի Մերոպ Նուպարեանէ. Գին 20 Փր: Առսնին Տնտեսութիւն, Մ. Մամուրեան. Գին 8 զրուշ:

Առաջնորդ փրկութեան, Գրեց Գարրիէլ Բահանայ Կիւրլէի. Գին 5 զրուշ:

Մէնէլլէյի անքեամը Ատիլյէ. Օսմանեան Կառնայի Օքիւնիք. Թարգ. Նիկ. Թոթվայեան. Հինգ հատորներու բաժնուած, իւրաքանչիւր հատորի գինն է 10 զրուշ:

Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Կայսերական մատենադարանին ի վիճենա. Միթարեան Միարանութեանէ. Գին 10 զրուշ:

Սոյն գիրքերը գաւառներէն ստանալու համար դիմել «Ծաղիկ» իմաստագրութեան:

Բաժանորդագիրն կԱՆՔԻԿ Թուրքիոյ համա-
տարեկան 50 դրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի,
ուրիշ երկիրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու-
թիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրոշմ
կ'ընդունուին՝ 1 դրշնոցը 34 փարայի հաշ-
ւով, կամ 100 դրուշի փոխարէն 115 դրշ:

ԵԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար
գիմէլ

Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱՆԱԳԱՇԱՅԱՆ
Պոլիս, Պաշէ-Կարու, Թաշ Խան, քիւ 50

ԾԱԴԻԿ

Լ Ր Ա Գ Ի Ր

درعليهده بغچه قوسنده طاش خاند
• • نومروده «زاغيك» غزتهسى مديرى
بالا قاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 13

Շ Ա Բ Ա Թ

8 ՓԵՏՐՈՒԱՐ 1892

ԵԿԵՆԵՑԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

Գ Ր Ա Դ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն (1)

Արիսակէս Եպիսկոպոս Սեդրակեանի
«Ամուսնական խնդիրներ» գրքին
վրայ,
Ի Թիբեկ Միսաք Արամեանէ
Ը.

Չհասութեան խնդրոյ մասին՝ պատ-
մական յիշատակարանաց մէջ՝ Դուինի
Բ. Ժողովէն յետոյ կը տեսնեմք Պար-
տաւի Ժողովը 768 թուին, Սիօն սքան-
չեւագործ Կաթողիկոսի օրով, այսինքն
Դուինի Ժողովէն 241 տարի յետոյ. այս
Ժողովը Ժ. Կանոնը կը սահմանէ՝
«Արդ, յայտնեալէ մինչեւ չորրորդ զար-
մըն մի իշխեսցին ամուսնութեամբ զու-
գեւ»։ Այս կանոնն ուղղակի Շահապի-
վանի վճռոյ կրկնութիւնն է։ Սակայն
խնդիր է թէ արդեօք այս կանոնը կա-
րող է՝ նշանակութիւն ունենալ՝ Հա-
յաստանեայց եկեղեցւոյ մէջ՝ չհասու-
թեան խնդրոյ պատմական զարգացման
կարգը որոշելու համար։ Արդեօք սա
մի ուրոյն օրէնք չէ՞ր Ազգեան Ժողովրդի
համար միայն, որ թէն դաւանակից է
մեզ, բայց տակաւին իւր առանձին սո-
վորութիւններն ունէր, կը վարուէր
Ղևտական օրինաց ճիւղահամարով եւ
անտեղեակ էր Շահապիվանի, Դուինի
Ժողովոյ կանոններու. ուստի, ինչպէս
Շահապիվանի կանոնը մի աստիճան հե-
ռացուցել էր ազգակիցներու ամուս-
թեան ներքին սահմանը, նոյնպէս սա
մի եւ նոյն դրութեան մէջ գտնելով Ազ-
գեանից Ժողովուրդը՝ իրիւր տղայոց ի
Քրիստոս» զկաթն ջամբէ, — Շահապիվանի
օրէնքն է դրած անոնց վրայ։

Սեդրակեան Սրբազանը Շնորհաւոյ
ընդհանրականի ակնարկած ճիւղագրու-
թեան մասին կ'սկսի մի երկրորդ բարակ
դատողութիւն՝ արժանի մի միայն Տը-

րօնցիւր մատնողութեան։ Սակայն, ե-
թէ օտար աստուածաբանին ներքին էր
Հայաստանեայց եկեղեցւոյ այդ շնոր-
հալի Հայրապետի մասին վայր ի վերոյ
դատողութիւններ ընել այն միակ պատ-
ճառով, որ նա իւր յայտնի հետազո-
տութիւնը կատարել է ոչ թէ անմիջա-
կան ազդրւորներէ, այլ օտար, այն ալ
նենգաւոր հեղինակաց գրուածներէն,
— Ս. Էջմիածնայ միաբան Հայ եկեղե-
ցական հեղինակին աններքին է։ Նախ՝
որ Շնորհաւոյ որոշումն այնպէս, ինչ-
պէս այսօր կայ Ընդհանրականի մէջ,
երբեք ընդունելութիւն գտած չէ մեր
եկեղեցւոյ մէջ, Բաւական է որ Սոյ
Ժողովը, Շնորհաւոյն յետոյ էր (1243),
ընդունած չէ այս դրութիւնը։ Աւելի
բանաւոր է ենթադրել թէ Գօշ-Մըխի-
թարի ակնարկած տգէտները եղծել են
Շնորհաւոյ թուղթը՝ չորս աստիճանը
երկու կողմից պահանջուած նշանակե-
լով, քան թէ խարխալել քմահաճ են-
թադրութեանց բաւզին մէջ, իբր թէ
Շնորհաւոյ վարդապետութիւնը հետե-
ւողութիւն էր օտար եկեղեցեաց ըն-
թացքին եւ իբր թէ Շնորհաւոյն դիտմամբ
քահանայից ուղղած է իւր թուղթը,
որպէս զի նախապէս արծարծուի Ժո-
ղովրդեան ու եկեղեցականաց մէջ հո-
ւումներու կարգը, որ եթէ ընդունուելու
չափ հասունանայ, այն ժամանակ Ժո-
ղովով պարտաւորեցուցիչ ընդհանրական
դրութիւն տայ անոր (Եր. 60—62)։
Այս քննութեան ժամանակ՝ Սեդրակ-
եան Սրբազանը մեզ կը հիացնէ իւր
դատողութիւններով, մանաւանդ 60րդ
երեսի ներքին տողերու մէջ արտայայ-
տած փիլիսոփայութեամբ, բայց եւ այ-
նու՝ որքան ալ մեծ լինէր մեր հիացու-
մը՝ կ'զգանք որ այդ դատողութեանց
ազդրւորը «Օրագիր»ի եւ «Մշակ»ի էջերն
են, քան թէ եկեղեցական խնդրոյ վը-
րայ եկեղեցւոյ համար գրուած եկեղե-
ցականի աշխատութիւնը։⁽¹⁾ Ճշմարիտ է

«Հանգիստակաց բաց պատուհանի մէջ
տեղ կանգնած մարդն աննկատելի կեր-
պով կ'ենթարկուի օդի ներգործու-
թեան», — բայց կ'ենթարկուի երբ իւր
անձը պատասխարած չէ համապատաս-
խան զգեստով։ Առանց այդ պատասխա-
րութեան՝ մէկ ալ տեսար անգգալապէս
այդ օդն այնպէս ներգործած է, որ
հինգչարթիկն յետոյ՝ ուրբաթ լինելն
ալ մոռացուի...

Սեդրակեան Սրբազանը ազատ է իւր
կամեցած իման մտածել եւ իրողութիւն-
ները ուզած գոյնի մեկնութիւններով
պատկերացնել, բայց մեզ համար կշիռ
ունի աւելի Գօշ Միթարի խօսքը, որ-
պէս ժամանակակից պատմիչ քան թէ
արդի ինքնուս փիլիսոփայողներու կար-
ծիքը։ Նորա խօսքը մեզ հասկանալի է,
Գօշ Միթարը տգէտ կ'անուանէ, ոչ
թէ զՇնորհաւոյն, այլ սորա գրուածքի
զօրութիւնը չհասկացողներն որոնք դու-
ցէ իրենց միտումը յաջողեցնելու համար
եղծած են Շնորհաւոյ թուղթը, եւ այս
ալ գանազան տեղեր։

Փոխանակ Շնորհաւոյ կանոնի ծագ-
ման պատճառը դուրսը փնտելու, ա-
ւելի մօտիկ չե՞նք լինիր ճշմարտութեան,
ընդունելով՝ ըստ պատմութեան՝ այն
բանաւոր կարծիքը թէ, Շնորհաւոյ ժո-
մանակ լատին եկեղեցականները շատ-
ցած էին Կիլիկիոյ մէջ եւ դադարեալէս
կ'աշխատէին Հայ Ժողովուրդը սառեցը-
նելու մայրենի եկեղեցիէն։ Թերեւս այս
մարդորոններու սերմանած գայթակղու-
րեթէ երեսուն տարի առաջ Ներսիսեան
դպրոցի չորրորդ դաստան յետին ա-
շակերտը Շնորհաւոյ եւ նորա ժամանա-
կի պարագայից վրայ աւելի հիմնաւոր
դատողութիւն է ունեցել եւ առաւել
նորք կերպով ըմբռնել եկեղեցւոյ ոգին՝
քան թէ այսօրուայ եկեղեցական վար-
դապետները. («Կուսակ», 1863. նոյեմբ.
եւ դեկտ. ամսատետրերու մէջ «Հայաս-
տանեայց եկեղեցին ԺԲ. դարում» ա-
շակերտական յօդուածը)։ Երեւի սա ա-
նոր համար էր որ այն ժամանակ կը
հասկնային արտաքին օդի դէմ պատըս-
պարուելու պատճառը։

(1) Շար. «Ծաղիկ»ի նախորդ թիւէն։

(1) Շատ օտարութի է, որ ասկէ դը-

թեանց առաջն առնելու համար՝ Շնորհալին գրած լինի իւր ճիւղագրութիւնը, որպէս զի ցոյց տայ թէ Հայոց եկեղեցին ազգապղծութենէ հեռի է բոլորովին՝ մինչև եօթն պորտը։ Ուշադրութեան արժանի է որ Շնորհալին քահանայից գրած է այս հրահանգը և ոչ առաջնորդաց, թերևս այն պատճառով որ լատին կրօնաւորք տգէտ քահանայներէն կ'սկսէին միամիտները դայթակղեցնել, ուստի և հարկ էր դայթակղութեան բուժումը անոնցմէ սկսիլ։

Շնորհալուց այս կանոնի, կամ ուղիղ ըսած՝ հրահանգի վրայ, իւր թեր ութեք քննողութիւնը կատարելէ յետոյ՝ Սեդրակեան Սրբազան տեսութեան կ'առնէ Գօշ Մխիթարի կանոնները։

Այդ կանոններէն առաջինը մի կանոնական գրութիւն է՝ գրուած 608 թուականին։ Դորա օճը և բովանդակութիւնը ցոյց կուտան որ նորա մէջ օրինադրուած կանոնն աւելի հին է, քան թէ գրութեան թիւը։ Գուցէ Դուլինի Բ. ժողովի կանոնական գրութեան առնուած է։ Այդ թուովն անտարարակոյս կը պատկանի Աբրահամ կաթողիկոսին, որու օրով Վիրք բաժանուեցան, և գրուած է 908 թուականէն յետոյ։ Այս կանոնական գրութեան մէջ երանելի Հայրապետը Ս. Գրոց սահմանները մի առ մի որոշելով և նորա արգիւծ ձևերը որդեկողմէն ճիւղի ազգականութիւնը, որ խորթութեան սերունդ է, վերջին սահման դնելով (մեր ճիւղագրութեան ԺԲ. պատկերը ըստ Ղևտ. ԺԲ. 15), կը պատուիրէ «Բան կանոնին, զոր երանելի հարց ի Քրիստոս հաստատեալ է և մինչև ցայժմ իբրև արեգակ անշնչանելի պահի, նոցա զայս աւանդեսցես»՝ սկիզբն ի հինգերորդէն առաջ, քան զի որ յանաւոնց բնութիւն սիրելի էր արկանել, այնց ողորմութիւն արարեալ զսահման մեղմացուցին, բայց լաւացն բնիկն է, որում և տեղեակ է և քո սրբութիւնդ»։ Ըստ այսմ հինգերորդ աստիճանը չհաս համարելով՝ վեցերորդն հաս կը համարի։ Իսկ և իսկ Դուլինի ժողովոյ որոշումը։ Հայկական կանոնագիրութիւնը միշտ շնորհապարտութեամբ պիտի յիշէ մեր եկեղեցւոյ միայնակ նախնի իրաւաբանը որ մեզ հասուցեր է այս կանոնական գրութեան բեկորը։ Մխիթարի արժանաւորութիւնը միակ այն չէ, որ նա իւր կանոնի մէջ յառաջ կը բերէ չհասութեան խնդրոյ վերաբերեալ կանոնական ձևով և պատճառաբանութեամբ արծարծուած ժողովական միակամ որոշումը, այլ նաև այն թէ՛ որպէս իւր ժամանակի հմուտ անձն և պատմաբան՝ կը վկայէ թէ «Զամենայն գրեթէ ի կանոնս այնոցիկ իրաւ սահման, այլ լիովին աստ, զոր առեալ

ի ցոյց (ե ցոյց) յօրինաց և ի մարգարէից»։ — այսինքն կը հաստատէ մեր խօսքը, թէ մեր նախնիք՝ եկեղեցական ժողովներու մէջ չհասութեան մասին սահմանած վճիռները՝ ոչ թէ ձեւեր են օտար օրինակաց վրայ, այլ ուղղակի հաստատել են Ս. Գրոց ցուցմունքներու վրայ⁽¹⁾։ Բայ աստի, Գօշ Մխիթարի այս վկայութենէն պարզ կ'երևի որ նա համաձայն է այս կանոնի որոշմանց։

Սեդրակեան Սրբազանը կը տարակուսի Մխիթարի այն խօսքի վրայ՝ «Մնողքն հինգերորդ» և կը նկատէ թէ ծնողք ճիւղագրութեան մէջ հաշուի չեն առնուիր։ Սեդրակեան Սրբազանը միշտ կ'ուզէ հաւատարիմ մնալ իւր կանոնին, — տարակուսիլ հոն ուր խնդիրներն արեւի պէս պարզ են, իսկ համարձակ վճիռներ տալ այնտեղ ուր հարկաւոր է իմաստուն զգուշութիւն բանեցնել։ Ընդհանրութեան տարրական կանոնը չգիտնալէն է որ Մխիթարի այս խօսքի վրայ կը տարակուսի։ Արդարեւ հարազատ եղբայրներէն հաշուուած որդւոց ճիւղագրութեան մէջ ծնողք հաշուի չեն առնուիր. բայց խորթ որդւոց ճիւղագրութեան մէջ կը հաշուուին. օրինակ՝

Ա. ճիւղագրութիւն հարազատ ազգականութեան.

1. Փեսացուն՝ Թորոս, 2. Հայր սորա՝ Մարկոս, 3. Մայր սորա՝ Մարթա, 4. Եղբայր սորա՝ Մնակ, 5. Դուստր սորա՝ Մարիամ, 6. Դուստր սորա՝ Մարգարիտ, հարսնացու.

Այս ճիւղագրութեան 3 և 4 աստիճաններու մէջ նշանակուած անձինք՝ Մարթան և Մնակը՝ հարազատ քոյր ու եղբայր են, այս պատճառով ծնողք հաշուի չեն առնուիր։

Բ. ճիւղագրութիւն խորթ ազգականութեան.

1. Փեսացուն՝ Գառնիկ, 2. Մայր սորա՝ Վարդուհի, 3. Այր սորա՝ Վարդան (երկրորդ այրը), 4. Եղբայր սորա՝ Վահան, 5. Կին սորա՝ Աղանի (երկրորդ կին), 6. Դուստր սորա՝ Էլլիս — ոչ ի Վահանայ՝ հարսնացու.

Այս ճիւղագրութեան 3 աստիճանի մէջ նշանակուածը՝ Վարդան՝ փեսացուի խորթ հայրն է, ուստի և հարազատ մօրմէն՝ Վարդուհիէն՝ յետոյ հաշուի

(1) Ով որ կը կամենայ այս մասին կատարեալ ըմբռնողութիւն ունենալ, մենք խորհուրդ կուտայինք համեմատական կերպով վերծանել Աբրահամ կաթողիկոսի թուղթը Բարսեղ Կեսարացւոյ կանոնական թղթի և Զօնարի ու Վալսամոնի կանոնական մեկնութեանց հետ։ Վերծանողը կը համոզուի որ այս տեսակ կանոնական գրութեան տիպարը և օրինակը Բարսեղ Կեսարացւոյ թուղթն է առ Թէոդորոս Տարսուցին։

առնուած է. այն ինչ, եթէ հարազատ հայր լինէր, այն ժամանակ մայրը՝ Վարդուհին՝ պիտի բաց թողնուէր։ Նոյնպէս և Կրդ. աստիճանի մէջ նշանակուած Վահանը հարսնացու էլլիսի խորթ հայրն է, որ վերոյիշեալ պատճառով հաշուի է առնուել հարսնացուի հարազատ մօր հետ։ Այսպէս, հարազատ մայրերն իրենց երկրորդ այրերու միջոցաւ, — այրերի, որոնք իրենց զաւակաց խորթ են —, ազգակից եղած են։ Այս երկու ճիւղագրութիւնն ալ վեց աստիճանի է. բայց երբ պսակը կատարուի, Յորդ ճիւղի մէջ նշանակուած հարսնացուն կը միանայ առաջին ճիւղի մէջ նշանակուած փեսացուի հետ ի մի մարմին և կը մնայ հինգ ճիւղ։ Այսպէս պիտի հասկցուի այն հիմամբ որ Աստուածաշունչ օրէնքը (Ղևտ. ԺԲ. 15) կ'արգիլէ հինգերորդ աստիճանի ամուսնութիւնը՝ «ամարչտութիւն է» ասելով, ուրեմն վեցերորդը կը թոյլատրէ։ Եւ որովհետեւ Աբրահամ կաթողիկոսի կանոնագրութիւնը Աստուածաշունչ օրինաց համեմատ սահմանուած է, և զոր լիւ կանոն կ'անուանէ Մխիթար, կը հետևի թէ «հինգերորդն ներելի է ասելով՝ հինգերորդը վեցերորդի հետ ամուսնացնել կը հասկնայ Գօշը⁽¹⁾»։

(Շարունակելի)

(1) Սեդրակեան Սրբազանը՝ իւր 73 ըրդ ծանօթութեան մէջ՝ Գօշ Մխիթարի դատաստանագրքի ձեռագիրներու լուսանցքի մէջ զանազան անձանց ձեռքով գրուած ծանօթութեանց ստեղծ մի ընդարձակ դիտողութիւն կ'ընէ։ Ս. հեղինակը կը ցուի այն վարդապետներու վրայ, որոնք կարդալով Գօշի դատաստանագրքի մէջ «երեքն ի մէկն և երեքն ի միւսն» լինելի է — և կամ «երեքն ի մէկն և երկու ի միւսն լինելի է», կը բողբեն հեղինակի դէմ՝ Շնորհալուց Ընդհանրական յիշեցնելով։ Կատկած չկայ որ իրաւացի է Սեդրակեան Սրբազանի ցաւակցութիւնը այդպիսի վարդապետներու տգիտութեան վրայ։ Բայց միթէ այդ մասնաւոր օրինակներէն կարելի է այն հետեւութիւնը հանել, որպէս թէ Գօշի դատաստանագրքի տգէտ ընթերցողաց խճճանքն անպատճառ չար դիտաւորութեամբ՝ կաշառակործութեան նպատակով՝ առաջ է եկած։ Այն տեսակ տգէտ կանոնաբաններ, ինչպէս ակնարկած է Ս. հեղինակը, եղել են և կարող են լինել։ Եթէ այժմ կան անձինք, որոնք՝ առանց իմանալու թէ Ս. Գիրքը մի նախադրութիւն ունի և առանց ծանօթ լինելու ճիւղագրութեան հիմնական կանոնին, յաւակնութիւն կ'ունենան հրապարակաւ հաս-չհասի մասին համարձակ վարդապետելու, — ի՞նչ զարմանք, որ առաջ ալ եղած են տգէտներ, ծաւալին այն չէ, որ այդ տգէտները ծեփծեփել են իրենց նկատողութիւններով Գօշ Մխիթարի Դատաստանագրքի լուսանցքը, այլ այն է՝ որ Գօշ Մխիթարի անու-

Ա. ՉՕՊԱՆԵԱՆԻ ԳՐԱՏԱԿԱՆՐ

Ա. Ծատուրեանի «Բանաստեղծութիւններ»-ի
մասին (1)

Ներկայացնելով մեր յարգելի ընթերցողներին Ա. Ծատուրեանի «Բանաստեղծութիւններ»-ից այն անյաջողները, որոնց մասին ակնարկել էր Պ. Քննադատը և թողնելով զայնս անաչառ ընթերցողների քննութեան, մենք կը շարունակենք յառաջ գնալ:

Պ. Չօպանը նկատում է թէ Ա. Ծատուրեանի պատկերների մէջ տեղ են բռնում միմիայն գարնան յաւիտենական վարդն ու սոխակը, ձմրան սպիտակ սաւանը և թէ՛ բնութեան տեսարանների մէջ լայն ու խորին զգացում պէտք չէ փնտռել, թէ՛ այն անգոյն, անեծես, անջիղ տողերի բովանդակութիւնը միշտ կարդացուած ու լրսուած բանի մը տպաւորութիւնը կը բռնուն:

Չարմանալու չափ անհեթեթ գաղափար, որ մինչև այսօր և ոչ մի լուրջ քննադատի բերանից ենք լսել: Ի՞նչ ասել է կարդացուած ու լրսուած բան: Արդեօք Ա. Ծատուրեանը յանցա՞նք է գործել, որ իւր պատկերներն առել է բնութեան պարզ տեսարաններից և ներկայացրել է պարզ ու ամփոփ ոճով, առանց նրանց մէջ էյֆէէի աշտարակը կառուցանելու կամ բանաստեղծութեան մասը գուժելու, որ միայն կարող էր հաճոյ լինել Չօպանեանի դասակարգի ֆանսազիային և թողնել չը լրսուած, չկարդացուած բանի մը տպաւորութիւնը: Հա՛, ա՛յս է ձեր պահանջածը. ուրեմն ինչո՞ւ բծիկները միշտ առողջապահութեան մասին կը գրեն, մանկավարժները՝ մանկավարժութեան, ևայլն, ևայլն, որոնց մասին մենք այնքան կարդացել ենք, Ուրեմն յիմար մարդիկ չե՞ն աշխարհիս բոլոր նոր փոփոխութիւնները, նոր բանաստեղծները, որոնց գրչի նիւթը միշտ միևնոյն մարդիկ են և միևնոյն բառերով, — միևնոյն ընկերական ու քաղաքային հարցեր, միևնոյն զրկանքի ենթակայ թշուառ դասակարգի ապագան, միև-

նով գրականութեան հանդէսը կը խաւարեցնեն համբալներն իրենց խաւարամիտ լուսաւորութեամբ: Գօշ Մխիթարի կանոնադիրքն այնչափ միայն կշիռ ունի, որչափ որ ճիւղադրութեան մասին տուած կանոնները կ'առնէ Շահապիվանի, Դուլինի օրէնսդրութեան և նոյնպէս Արտաշատ կաթողիկոսի կանոնական թղթին: Ասոնցմէ գուրս նորա խառնածներն այնչափ կշիռ ունին և արժէք, որչափ որ լուսանցքներու մէջ նորա դէմ գրողներու կարծիքները:

(1) Շար. նախորդ թիւէն:

նոյն բողոքը անիրաւունքի դէմ և այլ հաղարաւոր տիպեր, որոնք միշտ յուզում են լուսաւորեալ մարդկանց մտքերը և որոնցից մեծագոյն մասը աւելի պայծառ կերպով նկարագրել է արդէն Հիւգօն՝ իւր Թեոլաոնեք տոռար գործի մէջ: Ուրեմն Թեոլաոնեքից յետոյ՝ էլ ի՞նչ փոփոխութիւն. Բայրընից յետոյ ի՞նչ բանաստեղծութիւն կամ Շէքսպիրից վերջը ի՞նչ թատերագութիւն... Ուրեմն վար դրէք գրիչը, բոլոր գրիչ շարժողներ, եթէ ձեր իւրաքանչիւր մի տողի մէջ կարող չէք մի մի գիւտեր անել, մի մի չլուսած միտքեր արտայայտել և այն բոլորովին մըշակուած, որպէս զի մի ուրիշը կարող չլինէր որ և է նոր բան աւելացնել նորա վրայ, որովհետեւ ժամանակակից նոր գրագէտ մարդարէն — Պ. Չօպանը — այդպէս է հրամայում:

Ծառաջ գնանք:

Պ. Չօպանի աչքում Ա. Ծատուրեանի բարոյական խրատներ բովանդակող տողերն էլ ոչինչ են, տալիս բառերով (°), հասարակ գաղափարներ, անճաշակ կրկնութեամբ(1), յանգաւոր քաղաքի նման բան մը: Ոչինչ են Ծատուրեանի և կրօնական բանաստեղծութիւնները. — «Աղօթիր»-ը, «Աղօթք»-ը, «Սաշ. նահատակ»-ը, «Կեանքի խաչը», «Մանուկ Փրկիչը» միևնոյն բաներն են, առանց թուիչքի, առանց հաւատքի խորութեան, առանց վերացման վստահութեան (որոնք հիւանդոտ, գրգռեալ կամ փարիսեցիական երեւակայութեան միայն յատուկ են), մտադրաւ քահանայի շրթանց անգլխակցաբար շարժման մէջ կրկնուող աղօթքների նման բան մը...

Թէ որքան ճիշդ է Պ. Չօպանի կարծիքը, թող ապացուցանեն իւր պալտաբանութեան բանաստեղծութիւնները. Ահա՛.

Աղօթիր(2) (էջ 35)

«Ձերմ աղօթքը որպէս աղբիւր պայծառ յուսով լի կեանքի, Այրուած սիրտդ կըլմացնէ, կտայ նոր ուժ, նոր հոգի, Ձերմ աղօթքը որպէս երկնից անմահ նուագ քաղցրալիւր, Քեզ կախարդած՝ կվերացնէ մի այլ աշխարհ... Աղօթիր...»

Աղօթք (էջ 79)

«Սէր եմ խնդրում, ո՛վ Արարիչ, Քար սրտերը հալեցնող...»

(1) Թէև Պ. Չօպանի սոյն միտքը սոյն բառերով վերէն ի վար կրկնած է:

(2) Ցաւում եմ որ յօդուածիս անցկութիւնը թոյլ չէ տալիս ամբողջը դրնելու, որ աւելի շատ բան կարող էր ապացուցանել. հետաքրքիր ընթերցողը թող բարեհաճի այդ աշխատութիւնը կարգալ:

Սէ՛ր, փրկարար, սէր սիրովիչ,
Հէգ, թշուառին կեանք տուող...

«Սէ՛ր մեծագոր, սէ՛ր յաղթական,
Ո՛ր, չարութիւն խորտակող,
Սէ՛ր փոխադարձ, եղբայրական,
Մարդկանց ամուր շողկապող...»

Մանուկ Փրկիչ, (էջ 162)

«Այդպէս և մանուկ Փրկիչը ահա
Գլուխը խոնարհած մօր կրծքի վրայ,
Գարնան ծաղկի պէս ժպտում է անհոգ,
և իւր լուսավառ,
Փայլուն ժպտով նոր կեանք է բերում
մարդկութեան համար...»

Պ. Չօպանի կարծիքով Ծատուրեանի սիրային բանաստեղծութիւններն էլ ոչինչ են, չունին զգացման խորութիւն ու վստահութիւն. Գերմանական պզտիկ պզտիկ բանաստեղծութիւնների նման են, սակայն առանց մտքի ու գաղափարի: Ելէք իմանալիս ու սոսնձ տներն ևս ոչինչ են, անգոյն, անհամ, ճիշդ ջուրի պէս. վերջապէս Ա. Ծատուրեանի բոլոր բանաստեղծութիւններն, ի բաց առեալ այն մի քանի կտորներից, որ կարծես բանաստեղծի խաթրը չկտորելու համար յառաջ է բերած, — բոլորն էլ տալիս են, անհամ, անգոյն, անոճ, անբովանդակ, զուրկ թէ՛ ներքին արժանաւորութիւնից և թէ՛ արտաքին պաճուճանքից, ևայլն, ևայլն:

Չօպան է ֆէնտի, եթէ ձեր գրածը քննադատութիւն է, պէտք է որ ձեր իւրաքանչիւր մի խօսքը տպացուցուած լինէր, որովհետեւ առանց տպացուցի քննադատութիւնը հաւատար է Դօն-քիշօտի քամաղացների դէմ պատերազմելուն. այն ինչ դուք բաւականացել էք անվերջ կրկնութիւններով ու անմիտ բառախաղութիւնով: Այդ է ձեր գրադատականը, գիտութեան ու հասկացողութեան այդ ողորմելի պաշարով է որ համարձակում էք գրական ասպարէզ դուրս գալ: Հին դարերում ասած է. «Վա՛յ քեզ, քա՛ղաք, որ քո թագաւորը մանուկ է». իսկ մենք այս կարգի անմիտ գրադատականները կարդալով, ամենայն իրաւամբ պէտք է բացազանչենք. — վա՛յ քեզ, հա՛յ գրականութիւն, որ քո դատաւարները Պ. Չօպանի նման խառնատակներն են...

Եւ այս բոլորից յետոյ Պ. Չօպանը գանգատում է թէ Ծատուրեանը անմեղ տառապանքի ունի դարոյս ոգոյն դէմ, դարոյս գաւալը բռնաւորելով մուրթիւններով և անուանելով նրան հրէշ: Ի՞նչպէս չունենալ տառապանքիւն, երբ երեկի համբալը այսօր բանաստեղծութեան մահն է գուժում, երեկի աշակերտը այսօր համարձակվում է իւր հասկացողութեանը անմար-

սելի բաների մասին զանազան վճիռներ արձակել և այնքան անձնապատասխան ձևով, որպէս մի աշխարհահռչակ գիտնական:

Գրադատութիւն առեւելք մենք հասկանում ենք խորին ուսումնասիրութիւն քննադատելի աշխատութեան, որով երևան է գալիս նրան ներքին և արտաքին արժանաւորութիւն կամ ոչնչութիւնը, համազելի և անհերքելի փաստերով: Եթէ մեր ընթերցողներն ևս սոյն գաղափարն ունին գրադատութեան մասին, ուրեմն Պ. Չօսլանի գերուածքը գրադատութիւն լինելուց շատ հեռու է: Յուսով ենք թէ մայրաքաղաքիս յարգելի հայ-գրագէտները, ձեռք առնելով Ա. Ծատուրեանի «Բանաստեղծութիւնները», կը քննադատեն մասնագիտօրէն, թոյլ չտալով համբալներին գրական աստարիղի վրայ թաղաւորելու, որոնք իւրեանց անմիտ արտադրութիւններով նսեմացնում են հայ-մտքի արժանիքը:

1892. Յունիս. 21

ԱՐՇԱԿ

Կ. Պոլիս

ԿՐՕՆԱԿԱՆ (1)

«Եթէ մատուցանիցես զսպասարադքս ի վերայ սեղանոյ, և անդ յիշեցնիս եթէ եղբայր քո ունի ինչ խթ գէշ, թող զսպասարադքս քո առաջի սեղանոյն, երթ նախ հաշտեաց ընդ եղբոր քում և ապա եկեալ մատուցիլ զսպասարադքս քո» (Մատ. Գլ. Ե. 23):

Յիսուս երբ յայտնեց աշխարհիս իւր փրկագործական անձառելի պաշտօն, և սկսաւ քարոզել մարդկան Աստուծոյ արքայութիւնը, ըստ որում նոր ընտրած էր՝ խեղճ և տնուս մարդիկներէ՝ իւր տասներկու աշակերտներն, և միանգամայն հրաշագործութեանցն և քարոզութեանցը նկատմամբ՝ յոյժ սիրելին և պաշտելին եղած էր բազմաթիւ ժողովրդեան, հարկ և ժամանակն զգաց Աստուածապէս, որ սկսի մարդկութեան

(1) Մեծ գոհութեամբ կը յայտնեմք թէ՛ մեր առաջարկած հարցին նկատմամբ պատասխան առինք քանի մի բան ի բուն անձերէ: Սոցա մէջէն առ այժմ կը հրատարակեմք միայն Դարբինեան էֆէնտիլի յօդուածն, որ մի Մանիսացի երիտասարդ է, այժմ ուսուցիչ ի Գասպալ և որ անշուշտ ներկայ գտնուած է այն տխուր անցքերուն, երբ Մանիսացի քահանայք, անհաշտ բոլոր ժողովրդեան հետ, կը սպրդէին յեկեղեցի մտնել, աղօթել, պատարագել, մինչդեռ բարեպաշտ ժողովուրդը կ'ընդդիմանար: Անշուշտ սոյն տխուր տպաւորութեանց պէտք է վերագրել պատուարժան յօդուածագիրն բացագանչութիւններն:

Ծ. ԽՄԲ.

նոր եկեղեցին կազմել, և դուռնցանել մարդկան փրկութեան միջոցներն՝ քրիստոնէական նոր օրէնքն: Եւ այս նոր օրինաց փրկարար վարդապետութեան գրեթէ բովանդակ դասն, իբր ի նոր տաճարի, լեռը ելաւ աւանդեց:

«Եւ տեսեալ զժողովուրդսն, ել ի լեռսն, և իբրեւ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտք նորա, և բացեալ գրեթէ իւր ուսուցանէր զնոսա և աւսէր» (Մատ. Ե. 1): Որով և կ'ակնարկի թէ քրիստոնէական նոր օրէնքն՝ հին օրինաց տաճարի տրամադրութենէն բոլորովին արտաքայ կարգի նոր եկեղեցւոյ մի, և յերկրէ ի վերին յերկին՝ յԱստուած, և ոչ թէ յայս ստորին յաշխարհ հայեցողաց, կը պատկանի: Եւ կը լրանայ Յիսուսի այս հոգեկան գաստխօսութիւն Աւետարանի յարակից երեք գլուխներու մէջ: Եւ ապա Յիսուս լեռնէն վար կ'իջնէ:

Ահա այս լեռնական դասախօսութեան մէջ պարզած է Յիսուս յիշեալ խրատն, որ անկեղծ սիրոյ կատարելութեան ճամբիտ տիպարն և սահմանն է: Քանի՞ սիրուն և հիմնական վարդապետութեամբ կ'ուսուցանէ Յիսուս թէ ինչ և ինչպէս պէտք է լինել մարդուս այն ընթացքն՝ որ ճամբիտ և կատարեալ Աստուածապաշտական և փրկական է: Վասն զի մարդկային սոյն կատարելութեան և փրկութեան ընթացք և՛ հին օրինաց լրումն և կոթարեղութիւնն էր: Լրացնելով Յիսուս մարդասպանութեան ըստ հին օրինի արգելական օրէն և պատուիրանն, կը բացայայտէ թէ ոչ թէ միայն իրականապէս մարդասպան լինել, այլ և մարդուս հոգւոյն ազնուութեան և սրբութեան միակ միջոց եղող եղբայրսիրութեան և Աստուածսիրութեան հակառակ՝ բոլոր բանք և գործք և ամէն զգացմունք և կիրք՝ որ սուրբ սիրոյ դէմ են, մարդասպանութեան հետ հաւասար մահու չափ դատապարտելի մեղք են: Եւ այս՝ այնչափ զգալի և մատչելի կ'ընէ Յիսուս մարդկան սրտին, որ հետեւարար՝ ճամբիտ սէրը, սրտի մաքրութիւնը և հոգւոյ խաղաղութիւնը՝ բացարձակապէս գեր ի վերոյ ցոյց կը տայ քան զսպասարադքս՝ զղոհն՝ զաղօթքն, որ յԱստուածուստ փրկութեան սուրբ և միակ պաշտօն և միջոց այն միայն սահմանուած էր: Այո՛, այն ոճով կը խօսի աստ Յիսուս անոր համար, որովհետեւ մարդիկ քաջ համագրւած էին թէ մարդուս փրկութեան և մեղաց քաւութեան միակ պաշտօն՝ Աստուծոյ նուիրեալ սեղանոյ վրայ զոհագործութիւն և պատարագն էր, և այս կը լինէր առ Աստուած հաշտութեան միակ միջոցն: Բայց Յիսուս խորհրոյն բուն խնամք և էական կէտը պար-

զելով, այն աստիճան հաստատութիւն և կարեւորութիւն կը յայտնէ միայն սրբտի սրբութեան և սիրոյ, որ կը հրամայէ մինչև իսկ փրկութեան համար սրբազան պաշտօն ընդունուած պատարագը: Թողուլ սեղանոյ վրայ, և երթալ նախ հաշտուիլ ընդ եղբորն՝ որոյ քէնը երբ կը յիշուի, և մտքէ չ'ելնել: Որով կ'ապացուցանէ թէ սուրբ և անկեղծ սէրն ամենայն առաքինութեանց գլուխն և օգտակարն է, և առանց ընկերսիրութեան և խաղաղասիրութեան չէ՛ կարելի արդարանալ առաջի Աստուծոյ: Եւ ոչինչ օգտին պատարագք և աղօթք ա՛յն մարդուն՝ որ սրտով ոչ խակալ է, յիշաչար է, եղբայրատեսաց է, անհաշտ է, և չունի սէր և խաղաղութիւն իւր եղբորը հետ: Եւ քանզի գիտէր Յիսուս որ հոգածին մարդկան սրբտին սիրելի և փարելի կիրքերն մին էր քինապահութիւն և քինախնդրութիւնն, և ըստ որում խիստ դժուարին է սիրել զթշնամին և հաշտուիլ հետն, ուստի և, որպէս զի և ոչ իսկ մէկու մը՝ ընդ խռովեալ եղբորն չ'հաշտուելու նկատմամբ՝ պատճառանաց և բարուրանաց տեղի մը մնայ, այնպէս քաղցր և արդար ոճով զմարդ կատարեալ սիրոյ և հաշտութեան կը հրաւիրէ որ, ուղղակի չըսեր թէ՛ երբ դու եղբորդ հետ խռով և անհաշտ ես, այլ երբ կը յիշես, կ'ըսէ, թէ եղբայրդ քեզ դէմ խեղճ մը ունի, նախապատիւ ընտրէ քաղցրանալ, խոնարհիլ և հաշտութեան ձեռք կարկառել նմա, քան պատարագամատոյց լինել Աստուծոյ ի վերայ սեղանոյ: Ո՛վ ծայրագոյն առաքինութեանս՝ այս՝ կատարել միթէ կարելի՞ բան է առանց կատարեալ սիրոյ և խոնարհութեան չընորհի: Ահա այսքան կատարելապէս կը պահանջէ Յիսուս մարդէս սրտի ուղղութիւն, սէր և խոնարհութիւն, զորհէ՛ պատարագէ՛ աղօթքէ՛ առաջ, Եւ առանց այս կատարեալ առաքինութեանց, ընդունայն և անօգուտ կը համարի պատարագն և ամէն ինչ, ինչպէս համարեցաւ զկայէնին և անոր նմանեացն:

Իսկ «սեղան» և «պատարագ» բառերն՝ պէտք է իմանալ միայն այն նշանակութեամբ, որ և կ'ակնարկէ քրիստոնէայ եկեղեցւոյն Փրիստոսաւանդ և առաքելահաստատ սուրբ պատարագն և սեղանն, ուր և յայտ է անշուշտ թէ այն մատուցանող քահանայէն և մատուցակից ժողովրդէն ևս որքան սրբտի և հոգւոյ սրբութեամբ և ուղղութեամբ կատարելապէս արժանաւորութիւն և հաղորդակցութիւն կը պահանջուի: Այլ «սեղան», ինչպէս և «տաճար», պէտք է իմանալ մարդուս սիրտն և միտքն, ուր կ'ըմբռնեմք հոգւով Աս-

տուժոյ ներկայութիւնը, ըստ այնմ թէ «Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանոյ էք»: Եւ «Ապատարագ» պէտք է խմանալ՝ հոգւոյն խոնարհութիւնը և սրտի սրբութիւնը, և անկեղծաւոր սէրն ըստ այնմ թէ՝ «Ապատարագ Աստուծոյ հոգի խոնարհ, և զխրատ սուրբ Աստուծո՞ծ ոչ արհամարհէ»:

Ուրեմն մարդս որչափ միջոց ունենայ առ Աստուծո՞ծ հաշտութեան և վերկուծեան, զգալի և խմանալի սեղանոց վրայ պատարագամատոյց լինելով, բայց կ'արհամարհուի և իբր մարդասպան կը համարուի, երբ չէ հաշտ և սիրով իւր եղբորը, մարդու հետ:

Այլ աւանդ, արդեօք քանինե՞ր եմք Քրիստոսի սոյն պատուական խրատուն հակառակը կը վարուիմք. արդեօք քանինե՞ր եմք, որ մինչև գերեզման՝ եղբայրատեսաց և ոխակալ կը մնամք, և քանինե՞ր այն սուրբ և Աստուծո՞ծակաւոյց սեղանոյ վրայ իսկ, յիշաչարութեամբ և քինապահութեամբ զՔրիստոս կը պատարագեմք: Ո՛հ, որքա՛ն մեծ և սարսափելի ամօթ և պատուհաս պիտի լինի արդեօք եղբայրատեսցին՝ յայն ահագին հրապարակին, առաջի սուրբ և անմահ պատարագին Աստուծոյ, որ զայն խրատն և գործով ի վերայ խաչին աւանդեց, իւր խաչահանուացն իսկ ներում խնդրելով թէ՝ «Հայր թո՛ղ դողա, զի ոչ գիտեն զինչ գործեն»:

1892 Յունվ. 10 Յ. Յ. ԴԱՐԲԻՆԵԱՆ
Դասապա

Պ. Յ. ՏԵՐ ՄԻՐԱՔԵԱՆՑԻ

«ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ» ՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ

Ծանօթ մանկավարժ յարգոյ Պ. Յ. Տէր Միրաքեանց վերջերս լրագրոյ մը⁽¹⁾ մէջ կարգ մը քննադատական յօդուածներ գրեց, արդիւնք ուսումնասիրութեան Փռանսերէն լեզուի ուսման վերաբերեալ մի քանի դասագրոց՝ Հայ յօրինողներու կողմանէ պատրաստուած: Յարգոյ մանկավարժն հաճեր է քննել մեր վերջին հրատարակութիւնն «Նոր Դասագիրք Փռանսերէնէ ի Հայ թարգմանութեան» ևս, և անմեղ հպարտութիւն մը զգացինք կարդալով որ միայն այդ դասագրքին մէջ գտեր է այն հանգամանքներն՝ որ որոշել տուեր են նմա գործածել զայն այսուհետեւ այն զուտ Փռանսերէն դասագրոց տեղ, զորս ստիպուած է եղեր ցարդ գործածել, առ ի չգոյէ քաջայարմար դասագրոց Հայոց ձեռամբ յօրինեալ: Եւ յիշ-

(1) Այս պատասխանը յիշեալ լրագրոյն զրկեցինք նախ, բայց նա մերժեց հրատարակութիւնը, իւր ծանուցեալ անկողնակալութեան մի նոր ապացոյցն եւս տալու համար:

եալ դասագիրքն այնքան լաւ տպաւորութիւն մը բրած է յարգոյ քննադատին վրայ, որ ուզած է նորա կազմութիւնը ծանօթացնել. մի և նոյն ժամանակ իւր զխտոյութիւններն եւս պարզելով այս մասին: Այսու գրութեամբ կուգամք մեր անկեղծ շնորհակալքն մատուցանել առ յարգոյ մանկավարժն, և տալ ինչ ինչ բացատրութիւններ՝ որք կը բովսին իւր դիտողութեանց մէկ քանիններէն:

Ա. Յարգոյ մանկավարժն ընթերցանութեան նիւթերն ընդհանրապէս լաւ գտած է, «որովհետեւ աշակերտներու մտաւոր շրջանէն են ընտրուած և պարզ են»: Միայն թէ կ'առաջարկէ «գրքիս երկրորդ մասին մէջ գնել մի հետաքրքրւական մեծ պատմութիւն, որ իւր ամբողջ ընթացքով աշակերտներու ուշքը գրաւել կարողանար ու պատմելու աւելի կապակցեալ, ուստի և յարմարուոր նիւթ մատակարարէր» — Մենք մէկ քանի երկար պատմութիւններ վերապահած եմք «Նոր Դասագիրք» ի Բ. Տարւոյ, իբրեւ աւելի յարմար զայն գործածող աշակերտաց մտաւոր շրջանին:

Բ. Կ'ուզէ որ թարգմանելի հասունածներուն բառերը «գրքին վերջը դրուին սիւնակի ձեւով», փոխանակ հատուածին վերև նշանակուելու, «որպէս զի աշակերտները կարդալու ատեն չօգտուին» — Մենք մեր մասին, երբէք չեմք բաւականացած որ տղայք լաւ թարգմանեն. հոգ կը տանիմք միշտ բառերն ուրոյն հարցնելու, անոնց ուղղագրութիւնը պահանջելու, և այլն, և Բ. մասին բառերը միայն նշանակած եմք գրքին վերջն, սկսել տալու համար աշակերտաց բառարան նայելու վարժուիլ: Ո՛հ ապաքէն օտար լեզու ուսուցանող եւրոպական դասագրքերէն շատերն եւս այս կազմակերպութիւնն ունին: Եւ սակայն, յարգոյ մանկավարժն կրնայ իրաւունք ունենալ, ու մեծ անտեղութիւն մը չկայ որ Ա. Մասի բառերն եւս գրքին վերջը նշանակուին, և մեք այս ձեւն գործածած եմք մեր Հիմնականի Ա. Տարւոյ մէջ (Գ. տպագրութիւն), որ մամուլ տակ է և զոր պիտի փութամք մատուցանել առ յարգոյ մանկավարժն, անմիջապէս որ տըսագրութիւնն աւարտի:

Գ. Գրքին վերջը գետեղուած 40 երեսնոց ընդհանուր բառարանը աւելորդ կը համարի, «ըստ որում այս աստիճանի վրայ կանգնող աշակերտները տակաւին չունին այն զարգացումը, որ իւրաքանչիւր նախադասութեան խմատին յարմար բառն ընտրել կարողանային: Այդ բառարանը առժամանակեայ լինելով՝ մի և նոյն ժամանակ դասագրքի գինը ¹/₃ ով աւելի կը ծանրացնէ» —

Ըսինք արդէն քիչ մը վերը թէ Բ. Մասի բառերն դիտմամբ բառարանի ձեւով նշանակած եմք, բայց հոս բառարան բառը խիստ անձուկ մտօք պէտք է ըմբռնուի, որովհետեւ հոս՝ իւրաքանչիւր բառի քով դրուած է միայն այն նշանակութիւնն (կը զարմանամք թէ ինչպէ՞ս այս կէտն վրիպած է յարգոյ քննադատին ուշադրութենէն) զոր ունի թարգմանելի հատուածին մէջ, ըսել է Ա. և Բ Մասի բառացուցակներուն մէջ միայն ձեւի տարբերութիւն կայ, ուրիշ ոչինչ. բաց աստի, վերջին ձեւն յարգոյ քննադատին ուշադր լինելու առաւելութիւնն ունի: Ստուգիւ, մեք ևս կը կրկնեմք Պ. Յ. Տէր-Միրաքեանցի հետ թէ նոր սկսողներու ձեւքն բառարան տալ զանոնք բաւիղի մէջ ձգել կը նշանակէ, և ճիշդ այս մտածմամբ է որ Բ. Մասի բառերն գրքին մէջ նշանակել զանց չեմք առած, ինչպէս բրած են նմանօրինակ դասագիրք յօրինողներէն ուսման: Ահա ինչու մեք ոչ միայն աւելորդ չեմք համարիր այս բառարան, այլ և կրկնապէս օգտակար, սատեսակէտով եւս որ առիթ տուած է նա մեզ բառերուն հոմանիշները, նմանաձայնները, անոնցեաները, բարդերը, նոյն ընտանիքի վերաբերող ուրիշ բառեր, բայերուն նախնական ժամանակները և անկանոնութիւններն եւս նշանակելու, յորոց կրնան օգտուի ինքնընտել ուսանողք և այն աշակերտք որոնք լոկ դասարանին դասերով չեն յագեցնար. և այսչափ օգուտ կրնայ՝ կարծեմք՝ փոխարինութիւն մը համարուիլ այն 20 փարային՝ որով կը ծանրանայ գրքին գինը:

Դ. «Փերականական կանոնները» կ'ըսէ, «որոնք շատ ոտկաւ են այս գրքի մէջ, լաւ է զատել մի ուղեցոյց կամ բանալի անուն կրող գրքոյի մէջ, որ յատկացեալ պիտի լինի ուսուցիչներուն: Մենք առ հասարակ բարեկամ չենք օտար լեզուներու համար կազմուած Հայերէն քերականութիւններուն: Մանաւանդ կենդանի լեզուներու ուսուցման համար հարկաւոր է նոյն իսկ առաջի օրերէն նրանց քերականական դարձուածներն օտար լեզուաւ արտայայտելու մէջ վարժեցնել», և ընդհանուր թարգմանութեան ծառայող դասագրքի մը մէջ ծանօթութեան ձեւով — և այս ձեւն ուղեցոյցէ կամ բանալիէ մեծ տարբերութիւն մը չունի, կարծեմք — հոս հոն քերականական կանոններ զնելով՝ մեր նպատակն ամէն բանէ առաջ դերավարժ աշակերտն ինչ ինչ գծաւորութիւններէ ազատել է, և չստիպուիլ մի և նոյն բառն տարբեր ձեւի մը տակ ներկայացած ատեն, իբր նոր բառ նշանակելու բառա-

ցուցակներուն մէջ, հոգածութիւն մը՝ որ կարծեմք իւր կշիռն ունի մանկավարժութեան մէջ. բնական է որ այս տեսակ ծանօթութիւնք բազմաթիւ չեն կրնար լինել: Իսկ Բ. Մասին մէջ թարգմանելի իւրաքանչիւր հատուածէ վերջ գրաւոր պարտականութիւններ դրած եմք, զորս բնաւ չէ յիշած Պ. Տ. Միրաքեանց: Այս պարտականութիւնք յօրինուած են իբր վարժութիւն աշակերտին՝ քերականութեան մէջ սովորած կանոններուն ինչ ինչ բառերու ընթերցման, և երբեմն ալ բառագիտութեան վրայ: Գալով քերականական կանոնները առաջին օրերէն իսկ միայն ֆրանսերէն լեզուաւ — քանի որ խօսքը ֆրանսերէնի վրայ է — աւանդելու գաղափարին, չափով մը միայն կ'ընդունինք զայն: Եթէ ճշմարիտ է թէ աշակերտաց ֆրանսերէն քերականութիւն սովորեցնելու մեր նպատակն ամէն բանէ առաջ զանոնք ի վիճակի դնել է իրենց մայրենի լեզուն ֆրանսերէնի թարգմանելու, կամ որ նոյն է ստեղծ ֆրանսերէն լեզուաւ խմբագրելու, առաջին տարիներու մէջ՝ աշակերտին հասկցած լեզուաւ կրնամք հասկցնել իրեն բոլորովին օտար, մանաւանդ ֆրանսերէնի պէս կնճառտ լեզուի մը կանոններն: Անգամ մը որ աշակերտն աղէկ մը ըմբռնէ կանոնն, կարելի է՝ վարժութեան կամ քաղի համար՝ այն կանոնն ֆրանսերէն լեզուաւ եւս արտայայտելու փորձել ալ, թէ և, ըստ մեր խոնարհ կարծեաց, ասի անմիջական կառուցութիւն մը չունի, որովհետեւ ունեցած եմք աշակերտներ, որոնք առաջին տարիներուն մէջ մի միայն Հայերէն բացատրութեամբ սովորած են ֆրանսերէն քերականութեան կանոններն, (բայց քերականական բառերու ֆրանսերէնն սովորելով մի և նոյն ժամանակ), և լեզուին բաւական ընտելանալէ վերջ՝ երբ իրենց ձեռքը տուած եմք զուտ ֆրանսերէն քերականութիւն (Լատիվ է Յիլօսի)՝ Բ. և Գ. Տարիներն, ուր կանոններն ընդարձակօրէն ընդլայնուած են), ու և է դժուարութիւն չեն զգացած այդ կանոնները ֆրանսերէն լեզուաւ արտայայտելու: Բայց, կը կըրկնեմք, Հայերէն բացատրութեամբ ֆրանսերէն քերականութեան մը պէտքն առանց ի բաց մերժելու, քերականութիւն՝ որ պարունակէ նաև հրահանգներ, կ'ընդունինք թէ իբր օժանդակ զուտ ֆրանսերէն քերականութիւնն ալ իւր օգուտն ունի, և զայս ընդունելու համար է որ մեր «Հիմնական» ի Ա. Տարւոյ (Գ. Տարւոյ թիւն) մէջ զուտ ֆրանսերէն լեզուաւ հարց պատասխանելոյ ձևով՝ դրած եմք պարզ կանոններ: Նոյն բանն ըրած եմք նաև «Նոր Դասագիրք» ի Ա. Տարւոյ մէջ (Էջ 93 և 104):

Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

ԿՈՎԿԱՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Գանձակից, Երևանից և գաւառական ուրիշ քաղաքներից մեզ հարցնում են, թէ կաթնուղիկոսական ընտրութիւնների համար արդեօք կարող են պատգամաւոր ընտրուիլ այնպիսի մարդիկ, որոնք դէմ են Հայաստանեայց եկեղեցւոյ ոգւոյն և օրէնքներին: (1)

Ինքն ըստ ինքեան, ի հարկէ, հասկանալի է, որ ընտրութիւնը դոյն այդ եկեղեցւոյն վերաբերուելով, պատգամաւոր չեն կարող և չպէտք է ընտրուին այդպիսի մարդիկ:

— Մեր վիպական գրականութիւնը, ինչպէս յայտնի է, հարստացաւ խմբագիր Գրիգոր Արծրունու «Էվելինա» կոչուած մի վէպիկով:

Ինքը հեղինակը այդ վէպիկը հոգեբանական էսիւդ (ուսումնասիրութիւն) է անուանում:

Կարող ենք արդէն երևակայել թէ հեղինակը իւր էտիւդը գրելիս որքան սեպհական միտք է մաշել իւր էվելինայի վրայ: Այնպէս իմացաւ, որ «էվելինան» ուսերէն և անգլիերէն է թարգմանում. երեւի շուտով կը թարգմանուի ուրիշ և շատ լեզուներով: Մեր թերթի աշխատակիցներից մէկը՝ Իւնիուսը՝ յանձն էր առել «էվելինայի» մասին մի քննադատութիւն գրելու, որի հետ նա ծանօթացել էր Պարիզում, իբրև իւր հին բարեկամուհւոյ (նախնածեւր բան չըլլայ): Այժմ խմբագրութիւնս ստացել է թերթիս մի աշխատակցից պ. Ծաղարեգեանից «էվելինայի» վերաբերութեամբ մի քննութիւն, որ և առաջիկայում կը հրատարակուի «Նոր-Դար» բանասիրականի բաժնում:

Կանխօրէն հրաւիրում ենք մեր գրականութեամբ հետաքրքրուողների ուշադրութիւնը յիշեալ քննադատութեան վրայ: Այդտեղ մի հրաշք է պատահել, որ իրեն՝ խմբագիր Գրիգոր Արծրունուն՝ սովորական լինելով, չպիտի զարմացնէ: Երևակայեցէք, Ֆրանսիացի նոր վիպասան Մարսել Պրիվոն վերցրել է էվելինան, հայերէնից թարգմանել է ֆրանսերէն:

(1) Այս հարցումը կ'ակնարկէ ըզ-Գրիգոր Արծրունի, Խմբագիր «Մշակ»-ի որ Կովկասի մէջ հանրածանօթ է Հայաստանեայց եկեղեցւոյ ոգւոյն դէմ տալը տարիէ ի վեր ըրած հրատարակութեամբը, և որ այժմ երես ունեցած է Կաթնուղիկոսական ընտրութեան համար՝ իւր թերթին միջոցաւ՝ պատգամաւոր առաջարկելու ինքզինքն: «Նոր-Դար» Ազգային լրագիրը շատ իրաւամբ կը վճռէ թէ այդպիսիք չեն կարող պատգամաւոր ընտրուիլ և պէտք չէ որ ընտրուին: Այդպիսի ընտրութիւն մը պիտի լինէր անբնական և անբանական:

Ծ. ԽՄԲ.

րանսերէն լրագիրը և «Իդէալիստի» գաւառականը խորագրով հրատարակել է իբրև իւր յօրինածը, իւր սեպհական միտքի ծնունդը... Ինչ անուն տանք Ֆրանսիական վիպագրի այդ վարմունքին:

Մեր Հայ հրատարակագիրը հազիւ թէ մի վէպիկ էր գրել, մի հոգեբանական էսիւդ, և ուրախացել էր որ շտապում են ուրիշ լեզուներով էլ թարգմանել, և ահա նախանձոտ Ֆրանսիացի գրողը յաւիժտակում է էվելինային, և իրեն սեպհականացնում: Օհ, անկեղծութեան չափը տարել է այդ Ֆրանսիացին:

Բայց և այնպէս յոյս ունենանք, որ Խմբագիր Գրիգոր Արծրունին ներողամիտ կը լինի մեծահոգութեամբ և գանգատ չսկսիլ Ֆրանսիացի գրողին դէմ գրականական գողութեան համար, այլ կը բաւականանայ այն ծառայութեամբ որ մատուցանում է «Նոր-Դար»-ը, մերկացնելով այդ տգեղ արարքը: (1)

— «Կովկաս» լրագիրը հաղորդում է որ թեմիս Սրբազան Առաջնորդ Մամբրէ եպիսկոպոսը յունուարի 6-ի աղէտի զոհերի ընտանիքների օգտին 500 ռուբլի է նուիրել:

— Թիֆլիսի Հայ հոգևորականներն իրենց ապահովութեան գանձարանից 500 ռուբլի են նուիրել յունուարի 6-ի աղէտի պատճառով թշուառացած ընտանիքներին:

— Թիֆլիսի բոլոր բարեգործական ընկերութիւններն արդէն օգնութեան են հասել յունուարի 6-ի աղէտին զոհ գնացածների ընտանիքներին: Լիւայոյս ենք, որ Բագուի Մարդասիրական ընկերութիւնն էլ չմոռանալ այդ թշուառ ընտանիքներին:

— Թիֆլիսի Յովնանեան ուսումնարանի ուսուցչուհիներն և ուսուցիչներն իրենց մէջ ստորագրութիւն են բաց արել յունուարի 6-ի աղէտին զոհ գնացածների չքաւոր ընտանիքների օգտին:

— Հայուհեաց բարեգործական ընկերութիւնը յունուարի 6-ի աղէտին:

(1) Դիտելիք թէ Կովկասի Հայոց ստութեանց գանձարանն է Գրիգոր Արծրունեոյ «Մշակ»-ը, բայց չէինք գիտեր թէ Գրիգոր Արծրունին այդքան նշանաւոր գրագող ալ է: Վառք Աստուծոյ, այդ ալ իմացանք, ինչքան պիտի խմանանք տակաւին: Եւ Թրքահայոց ստութեանց գանձարան թերթիկն ալ, բնականաբար առանց տմէնալու, կը յայտարարէ թէ էվելինան մեծ գարկ տուաւ Հայոց վիպական գրականութեան, և թէ՛ այդ հեղինակութիւն շուտով թարգմանուեք է եղբր մի քանի եւրոպական լեզուներու: Ահա՛ թէ ինչ խաբէրայական միջոցներով իրենց համար անուն կը շինեն մեր հրատարակային գործիչները:

Ծ. ԽՄԲ.

զոհ գնացածների չքաւոր ընտանիքների օգտին 1000 ռ. է նուիրել:

— Մինչև այժմ յունուարի 6-ի աղէտին զոհ գնացածների թիւը 32 էր համարւում: այս օրերս գտնուած է դարձեալ մի դիակ: ուրեմն բոլոր զոհերի թիւը 33 է: Պաշտօնական խիստ հետազօտութիւնից յետոյ, այժմ հաստատ է, որ զոհերի թիւը 33-ից չէ անցնում:

— Ինչպէս այժմ իմանում ենք, Մալիտա կայարանում երկաթուղւոյ աղէտի ժամանակ ողջ ողջ այրուած են 10 հոգի և վիրաւորուած են 9 հոգի: Սակայն պատմում են որ զոհերի թիւն աւելի շատ է, որովհետև ենթադրում են, որ այրուած գնացքի վրայ առանց տոմսակի մարդիկ էլ պէտք է որ ուղեւորւում լինէին, ինչպէս այդ միշտ պատահում է:

— Յունուարի 15-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ յունուարի 6-ի աղէտի պատճառով թշուառացած ընտանիքների օգտին ստացուած է 1245 ռ., որից 1000 ռ. ֆիթոյեանի սուստըրական տնից և 1000 ռ. իշխ. Գ. Ի. Օրբէլեանից: Բազաքային վարչութեան մէջ մինչև այժմ ստացուած է 2277 ռ. 90 կ.:

— Մալիտա կայարանում պատահած երկաթուղւոյ աղէտի մասին Նով. Օպ. լրագրի թղթակիցն, ի միջի այլոց հետեւեալն է պատմում:

«Գետնի վրայ, շնորհիւ անընդհատ եկող ձիւնի, հրդեհի հետքերը չեն երևում, բայց Յիպայի մօտ կայարանի ուղիների ամբողջ աջ կողմը տխուր և սարսափելի տեսարան է ներկայացնում: Այստեղ բաւական մեծ տարածութեան վրայ իրար վրայ թափուած են այրուած կաթսայներ, խոնձուած և ծւմուած թիթեղներ և վազօնների ուրիշ մասեր, սովորական թիւերի նման ոլորուած և կապկապուած պողպատի երկաթագծեր: Դիմացը երկաթգծերի վրայ կանգնած է Ֆերիի այրուած և կոտորատուած շոգեմեքենան: Աւերակների ետևը, համարեա գետտփին, կանգնած են մի խումբ մարդիկ, որոնք աղաղակում, հեկեկում են: Ձեռն և թաց կաւի մէջ թաղուելով, ես մի կերպ գնում եմ ներանց մօտ: Սարսափելի, արիւնը սառեցնող տեսարան է ներկայանում աչքիս: Գետնի վրայ դրուած են երկու նեղ խոնձուած տախտակներ և նրանց վրայ դրուած են աղէտին զոհ գնացածների ոչ թէ աճիւններն, այլ «մնացորդները»: Ձախ կողմը ծայրին թափուած է մի փոքր կոյտ սև մոխիր, որ խառնուած է ինչոր անորոշ ձևի ածուխների և մի քանի սպիտակ այրուած ոսկոռների հետ, որոնք մոխիր են դառ-

նում չօչափելիս...: Այս բոլոր կոյտը դիւրութեամբ կարելի է տեղաւորել քթի փոքրիկ թաշկինակի մէջ... Այս է բոլորը, ինչ որ մնացել է աղէտի զոհերի մէկից: Յետոյ թափուած է երկրորդ զոհի մնացորդը — մի կոյտ, որ առաջին կոյտից մեծ չէ, դրա մէջ ոսկոռներն աւելի շատ են, սև ածուխն աւելի քիչ է... Այնուհետև երրորդ զոհն է — մերկ ողնաշարի մի կտոր կէս արջին երկարութեամբ: Նրա վրայ դեռ կախուած են բոլորովին ածուխ դարձած մաշկ կտորներ: Մօտը երկու երեք ածուխ դարձած բոլորովին սև փոքրիկ կտորներ, և ուրիշ ոչինչ... Կողքին ընկած է մի այրուած մարմին, միակը, որի վրայ դեռ երևում են գանգի մընացորդները: Նրա ոտները բոլորովին այրուած են, ձեռքերից փոքրիկ կտորներ են մնացել, աւերակների տակից հանուած վերջին դիակն է: Այդ դիակը գտնուած էր տական տակ գետնին ամուր ճնշուած և այդ բանի շնորհիւ նա բոլորովին չէր այրուել: Վերելից ընկած էին երեք վազօն-ջամբարներ: Վերջապէս աջ կողմը ընկած են երկու վերջին զոհերի անձև այրուած կտորները... և այս բոլորի վրայ բարձրանում է շուրջըն հաւաքուած աղգականների յուսահատ հառաչանքն ու լացը...»

— Ոմն Ս. Պետերբուրգում մի քանի տեխնոլոգների շրջանում ցոյց է տուել իւր հնարած մի բազաքութիւն, որի մէջ մի օր ու գիշեր պահած փայտի բարակ ձողը վառուած է երկու մոմի լոյս արձակելով: Ընդ նմին այդ փայտէ մօտը ոչ ծուխ ունի, ոչ հոտ: Ինքը բազաքութիւնն այնքան է ժան է, որ փայտէ մօտը նստում է մի կոպէկ: Այժմ Ս. ինդիւր է տուել արտօնութիւն ստանալու և Պետերբուրգում գործարան է բանալու: Երկաթուղիներից մէկի վարչութիւնից նա արդէն պատուէր է ստացել տասը հազար մոմ պատրաստելու:

ՇՈՒՇՈՒՑ. — Յունուարի 6-ին Թիֆլիսում կատարուած սարսափելի աղէտի լուրը ահագին իրարանցում առաջացրեց Շուշուայ Հայերի ու Պարսիկների մէջ: Ամբողջ երկու օր հեռագրատանը ասեղ ձգելու տեղ չկար: չատերը եռապատիկ, քառապատիկ փող էին վճարում, որ միմիայն իրենց հեռագիրը ամենից առաջ թուչէ Թիֆլիս և իրենց սիրելիներից որ և է համբաւ բերէ: Ամենքի ուրախութիւնը փոխաբերուել էր սուգի ու վշտի, ամենքը հաւատացած էին, որ կուրը կլանել է ամբողջ Թիֆլիսը և դրա հետ միասին իրենց սիրելիներին: և որքան ուրախութիւն պատճառեցին այն հաղաբաւոր հեռագիրները, որոնք անընդհատ յայ-

տարարում էին սրան և նրան, թէ հանգիստ եղէք, վտանգից ազատուած՝ ողջ և առողջ ենք: Սկզբում լուր էր տարածուել, թէ Միքայէլեան կամուրջն էր կոտորուել, որից պարսիկներն անգամ ա՛յն ու վա՛խով լցուել էին հեռագրատանը, բայց երբ իրողութիւնը պարզուեց, լացի ու հառաչանքի ձայներ լսուեցին: Ասում են, որ Շուշու հեռագրատանը 1500 ռ. փող է վերցրել այդ օրուայ ընթացքում:

— Մեծ-Ղարաքիլիսայից մեզ գրում են հետեւեալը:

«Թիֆլիսում պատահած յունուարի 6-ի աղէտը մի օր յետոյ մասնաւոր ճանապարհով իմանալով, մեզ բոլոր գիւղացիներին սարսափ ազդեց, բայց աւելի սարսափ ազդեց ողջամիտ ընթերցողներին Թիֆլիսում հրատարակուող մի հայ լրագրի հրատարակած և համեմատ ստույգութիւնները, որոնք այստեղ, և հաւանական է կարծել՝ ամէն տեղ, հալած իւղի տեղ ընդունուեցան մի խումբ մարդկանց կողմից, որոնք միշտ սովոր են ամէն բան ուրիշի խելքով դատել:

«Այդ մարդիկ իրենք ամէն օր խաբուում են և իրենց հետ խաբում շատ անմեղների, որոնք իրենց քթից հեռուն դատելու ընդունակութիւն չունին, ինչպէս այդ երեւեցաւ յունուարի 6-ին տեղի ունեցած աղէտից:

Այդքան զրպարտութիւն օր ցերեկով այդ որոշ մարդկանց կողմից, ինչպէս ասացի, մեզանից շատերին զարմանք պատճառեց, մինչև «Նոր-Դար» թիւ 4-ը ստանալը:

Ինչպէս աղէտը տեղումը առիթ էր դարձել այդ մարդկանց համար եզրփոխական սրբուած միջոցներով հասարակական «կարծիք» գրաւելու և իրենց «մտադրուած» նպատակին հասնելու, նոյնպէս այստեղի մարդիկն էլ ուրախացած՝ աւետում էին միմեանց՝ տարած յաղթանակը:»

— «Նոր-Դար» ընթերցողներն արդէն գիտեն, որ էջմիածնից Թիֆլիս է ժամանել Սինոդի անդամ գեր. Դրիզորիս Եպիսկոպոս Աղուանեանցը յունուարի 6-ին պատահած աղէտի գործի համար: Գեր. Սրբազանի հետ եկել են Արթ. Եփրեմ վարդապետ Սուքիասեանը և մի աշխարհական Սաղաթելեան անունով պարոնը ձեւարանի տեսչի օգնականի պաշտօնն է վարում այժմ էջմիածնում:

— «Նոր-Դար» ի անցեալ համարում հաղորդեցինք որ Խմբագիր Գրիգոր Արծրունւոյ «էվէլինա» կոչուած վէպիկը՝ Ֆրանսիացի հեղինակ Մարսէլ Պըրէվոն թարգմանել է Ֆրանսերէնի և հրատարակել իբրև իւր սեփական մտքի ծնունդ: Այժմ կարող ենք այս աւե-

լացնել որ Մարտէյն Պրէզիտը խմբագիր Գրիգոր Արծրունւոյ «հոգեբանական է-տիկա» շատ առաջ է թարգմանել քան թէ այդ էտիկաը Արծրունին մտածել է գրելու :

ՆՈՐ—ԴԱՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Լոյս եւ բոյս .— Արհեստական անձ-րեններու զիւտը Ամերիկացւոց պար-տիմը : Այժմ նոքա յաջողած են արհես-տական լուսոյ բարեբար ազդեցութիւնն յառաջ բերել բուսոց վրայ : Երկայն փորձերով հաստատուած է թէ, այն բոյսեր՝ որոց քով գիշերները ելեկտրա-կան լուսոյ լամպարներ կը դրուին, բուն ժամանակէն շատ յառաջ հասունանալով, բնականէն աւելի կը զարգանան, և ի-րենց ծաղիկն ու պտուղ աւելի համով ու հոտով կը լինին :

Մրնուորսի բարեխառնութիւնը .— Կը կարծուէր թէ միջնորտին բարեխառ-նութիւնը առ իւրաքանչիւր 150—200 մէթր բարձրութեան՝ կը նուազի մէկ աստիճան : Հոկտեմբեր 18ին ի Փարիզ կատարուած օդերևութաբանական զնն-նութիւնք բոլորովին հակառակ ար-դիւնք յառաջ բերին . որովհետեւ միջ-նորտին վերին խաւերը աւելի բարձր բարեխառնութիւն մը ցոյց կուտային քան ստորին խաւերը :

Կէս ձկան կաթը .— Սեպտեմբեր ամսոյն մէջ, Ֆրանսայի հիւսիսային կող-մը գտնուող Հուկ ծովածոցին մէջ կը բռնուի 8—9 մէթր երկայնութեամբ էգ կէտ մը, որ տակաւին նոր ծնած էր իւր ձագերը : Պ. Պուվիէ անոր արեան շրջանին և ստինքներուն վերայ շահե-կան զննութիւններ կը կատարէ . կէտին կաթը շատ զարմանալի դեղնութիւն մ'ունենալով, կովու կաթին սերին կը նմանի և շատ ակորժահամ է :

Լուսնոյ խաւարումը .— Հակառակ մեծամեծ պատրաստութեանց, Եւրո-պոյ շատ կողմերէն չէ կարելի եղած տեսնել լուսնոյ ամբողջական խաւա-րումը, որ տեղի ունեցաւ նոյեմբեր 15ի գիշերը . երկինք թանձր ամպերով ծածկուած էր : Պ. Պզանսոն՝ թէ և օ-գապարիկով մինչև 1350 մէթր բարձ-րացած՝ բոլոր գիշերը միջնորտին մէջ անցուց, սակայն ամպերու պատճառաւ լուսնոյ տխուր դէմքը չկրցաւ տեսնել :

Վարդի պատմութիւնը .— Ե. Ժօր, Փրօֆէսէօր յէքս, կը յայտնէ թէ հռով-մէական կայսրութեան ջնջումէն ի վեր վարդը չ'է դադրած մշակուել : Վար-դը՝ Շիլլըպէրի կնոջ Իւթրօսթի (Չ. դար) և Մեծն Կարոլոսի պարտիզաց մէջ կը գտնուէր . Վալաֆրիտ Սթրա-

պիա կ'երգէ զայն . Հիլտըհարտ անոր յատկութիւնները կը թուէ . Մեծն Ալ-պէր և Անգլիացի Պարթէլըմի խնամօք և հետաքրքրութեամբ կը նկարագրեն վարդը :

1767ի էնժիլէնցան .— Հետաքրքիր մը գտած է հետեւեալ նամակն, որ գը-րուած Լորտ Չէսթէրֆիլտէ, կ'ապա-ցուցանէ թէ նոր չէ մեր էնժիլէնցան . — «Պէնզիթ, 9 յուլիս 1767 . Սիրեց-եալ բարեկամ . . . կ'ըսէք թէ շատ հի-ւանդութիւնք կան ի Տրեզուս . վտան-հմ թէ ի Լոնտոն ևս անպակաս է : Այ-ժըմ հոս հիւանդութիւն մը կը տիրէ, զոր սիրուն անուամբ մը էնժիլէնցա կը կոչեն, տկար ջերմ մ'է այս որմէ մարդ չ'մեռնիր . . . Կը կարծեմ թէ հոս մնալով ազատեցայ անկից : Աստուած փրկէ զՁեզ ամէն հիւանդութիւններէ և օրհնէ զՁեզ : Լորտ Չէսթէրֆիլտէ »


Խառնախառնութիւն սննդոց .— Պ. Պիւր-բէր, բժշկական Ակադեմիային ներկա-յացուցած է երկասիրութիւն մը, յո-րում մանրամասնօրէն նշանակած է գի-տական այն մէթոտները, որոցմով կա-րելի պիտի լինի ճանչնալ բոլոր ըմպել-եաց և կերակրոց նենգեալներն :

Երկու nsfai կասուն .— Լ. տը Ժա-սի կը նկարագրէ էգ կատու մը, որ միայն երկու ետեւի ոտքերն ունի . կեն-դանին առողջ է և գիւրութեամբ կը քալէ . երբ կենայ՝ նման քանկուրուի ուղղահայեաց է, իւր պոչը իբր երրորդ ոտք մը դորձածելով : Կատուն ձագեր ևս ունեցած է, երկու անգամ երկու-քական ձագեր, որոց անդրանիկները իրենց մօր նման երկու ոտքեր ունէին, մինչդեռ միւս երկուքը չորսական ոտ-քեր :

101 տարեկան ֆիլիպպէս .— Քիէշի (Ռուսիա) գետնոց մէջ կը գտնուի քի-միաքիտութեան երեւելի Բրօֆէսէօր մը ինեաս Վօնպէրի, որ ծնած է 1791 յու-նուար 17ին, թէ և իւր բազմաթիւ ա-շակերտաց մահը տեսաւ, սակայն տա-կաւին քաջառողջ է, և ինքն երկրորդն է երկարակեաց քիմիագէտներու . առա-ջինը երեւելին Շէվրէյլ՝ մեռած է 103 տարեկան :

Ապառաժ լեռին .— Հոկտեմբերի մէջ, խուֆ մը երկրաբանք Ապառաժ լեռանց (Ամերիկա) վրայ գիտական խու-զարկութիւններ կատարելով, քարացած սքանչելի մարմիններ կը գտնեն . տե-սակ մը սողուն գտնուեցաւ, որոյ եր-կայնութիւնն էր 15 մէթր, նաև նա-խապատմական կենդանի մը . atlanto-saurus, որ ամենավիթխարին պէտք է լինի կենդանի արարածոց, իւր 20—28 մէթր երկայնութեամբ :

ԹԱԹՈՒԼ ԲԻԻԲԵԼԻԱՆ



ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգամաբախութիւնք .— Տիարպէ-քիւրի Ջերմիկ գաւառակին գայմագամ անուանեցաւ Շիւքրի էֆ . — Գօնեայի Ուլլուպօրլու գաւառակին գայմագամ անուանեցաւ Ահմէտ Բաշիտ էֆէնտի, գայմագամ Իւրկիւպի . — Իւրկիւպի գայմագամ անուանեցաւ Հապքը էֆէն-տի, նախկին գայմագամ Բազարճըքի : Ասիւնանք . — Սանլիէ Միւթէմալիքի աստիճան տրուեցաւ Տարտանէլի Իտա-րէի Ժողովոյ անդամներէն Մուսթաֆա պէյի . — Սանլիէ Միւթէմալիքի աստի-ճան՝ արտաքին թղթակցութեանց դի-ւանի քարտուղարներէն Ռուբէն Գարա-գալ էֆէնտի :

Պատգամաբախութիւնք .— Դ. Կարգի Օսմա-նիյէ պատուանշան տրուեցաւ Դարա Բէշէլի Աշիւթի պէյերէն Հաճի Պէքիւր պէյի . — Լիազաթի արձաթ չբադրամ՝ Սէրվէքը Ֆիւնուկ լրագրոյ արտօնատէր Ահմէտ Իհսան պէյի . — Ե. Կարգի Մէ-ճիսիյէ՝ Կաթոլիկ Ասորւոց Պատրիար-քարանի քարտուղար Ճօրճի Աչըք պաշ էֆէնտի :

— Յաւուկ վարչութիւն մը կազմելու մենաշնորհ խնդրած է Իրաւագիտական վարժարանի շրջանաւարտներէն փաս-տաբան Միւրոյիզ էֆ . Անտօնեան, վերջ տալու համար «բօլիցաճը» և «միջնորդ» կոչուած կարգ մը մարդոց շահատա-կութեան որք չողքենաւ անցագրին վը-ճարելու անկարող ճամբորդաց անցա-գրին վճարելով, յետոյ մի քանի պա-տիկը կ'ստանան : Այս վարչութիւն սո-վորականէն քիչ մ'աւելի գնով տոմսակ-ներ պիտի վաճառէ, և յաւելեալ գու-մարին մէկ մասը պիտի յատկացնէ Հա-մազգային Անկեղանոցին, իսկ միւս մա-սըն երկուքի բաժնուկով, մին պիտի յատկանայ պաշտօնէից, միւսը՝ արտօ-նատիրոջ :

— Պալոյ, Բերայի եւ Իսկիւսարի կողմը պաշտօնավարող՝ իւրաքանչիւրը 40 մարդէ բաղկացեալ 15 գումարտակ ոստիկանաց վրայ պիտի աւելցուին հինգ գումարտակ ևս, այսինքն 200 ոստի-կան :

— Թնդանօրածիզ չորս սպայք Յը-ռանսա ու Գերմանիա պիտի զրկուին՝ գինագործարանաց ու վառօդի գործա-րանաց մէջ երեք տարի մնալով պէտք եղածն ուսանելու համար :

— Զմիւռնիայէն եկած նաւուց վը-րայ դրուած քարտնթիւնան ջնջուեր է ի Մալթա :

— Կրօնապէս արգիլեալ արարքներէ զգուշանալ, օրը հինգ անգամ աղօթե-լու չթերանալ, գինեմուլութենէ հեռի մնալ, և այլն, կը պատուիրէ իսլամաց՝

եպարքոսական շրջաբերական մը, կայս-
հրամանի մը համաձայն:

— Բաղէի երկրագործական դրա-
մատան մասնաճիւղին և խճուղեաց ու
կամրջոց վարչութեան պաշտօնէից հա-
մար՝ 15450 դրուշ ծախքով շէնք մը պի-
տի շինուի տեղւոյն կառավարական
պաշտօնատան բակին մէջ գտնուած
գետնոյն վրայ:

— Պուրսուրի (Գոնիա) գաւառին ու
շրջակայից մէջ 7—8 տարիէ ի վեր աս-
պատակող Ալասարը Օղլու Ահմէտ ու
Եուսուֆ անուն աւագականներն ու իրենց
ընկերներէ մին ողջ ձերբակալուեր են,
իսկ երկուքը սպանուեր են: Ասոնց
ձեռքը գերի ինկած Կիւլալմ անուն
աղջիկն ևս ողջմբ ազատուելով, իւր
հայրենիքը ղրկուեր է: Ձերբակալուեր
են նաև Պորուրի ու Անթալիայի գա-
ւառաց միջև ասպատակող Քելլէ Հիւ-
սէին և ընկերք:

— 1600 ոսկի Ասլահովութեան Սըն-
տուկին մէջ, ինչպէս և 500 ոսկոյ ար-
ժողութեամբ կարասի, ևայլն, ունի ե-
ղեր այս օրերս ի Պոլիս վախճանող Օս-
ման անուն մուրացիկ մը:

— Յանձնաժողով մը կազմուած է
պատրաստելու համար արձանագրու-
թիւն մը, ուր պիտի նշանակուին կու-
սակալաց, կառավարիչներու, գայմա-
գամներու և Օսմ. դեսպաններու ի-
րենց պաշտօնավարութեան միջոցին ը-
րած դործառնութիւնները:

— Թրքաստանի գրողմաթղթոց
կեղծերը երեան ելած լինելով, այդ
գրողմաթղթոց, ինչպէս և «քառթ բօս-
թալ»ներու նորերը պատրաստուած են
որք հրապարակ պիտի հանուին յառա-
ջիկայ մարտին:

— Ըստ Կայս. հրամանի, Մարգա-
րէին ծննդեան օրն ևս ազատ պիտի
արձակուին իրենց պատժոյն երեք չոր-
որդ մասն աւարտող բանտարկեալք,
ինչպէս կ'արձակուին ուրիշ տօնական
օրեր:

— Շապին-Գարահիսարցի Մարտի-
րոս անուն հացավաճառ մը սպանուե-
ցաւ ի Կէտիկ-Փաշա: Չարագործք, որք
երեք էին, մորթելով զՄարտիրոս, վը-
րան գտնուած 180 ոսկին կողոպտեցին:
Անոնցմէ մին, Սթավրի, որ հացագործ
է եղեր, ձերբակալուեցաւ:

— Զմիւռնիոյ հեռագրատանց և
թղթատարատանց ընդհ. տնօրէն է-
րամ էֆէնտի իւր պաշտօնատեղին ու-
ղեւորեցաւ:

— Թուրք աղջկանց վարժապետանո-
ցին համար նախնական ու բարձրագոյն
նախալրթարանի ճիւղեր հաստատուած
են վեց տարւոյ շրջանով: Իսկ բուն
վարժապետանոցին շրջանը երեք տարի
որոշուելով, դասերն ըստ այնմ որոշ-
ուած ու բարեփոխուած են:

— Արեւելեան երկաթուղեաց վիճա-
կահանութեան պարգեւներուն 100ին
58ը վճարելու տեղ, կը մտածուի յետ
այսորիկ 100ին 72 վճարել: Այս մասին
արդէն իսկ գրեթէ ընդհանուր համա-
ձայնութիւն գոյացած է արժէտեարց
միջեւ:

— Դիւանագիտական վարժարանին
մէջ պիտի ընդունուին Միւլքիյէ ու Սուլ-
թանիյէ վարժարանաց շրջանաւարտք,
ինչպէս և Լեզուագիտական վարժարա-
նին շրջանաւարտք: Այս վերջնոյն ուս-
մանց ծրագրոյն վրայ պիտի աւելցուին
նաև գերմաներէն, անգլիերէն և եւ-
րոպական ուրիշ լեզուներ:

— Աւագակապեք Գարթան Աթա-
նաս, որ անցեալները երկաթուղոյ
կառավարման մը վրայ յարձակելով գեր-
մանացի զօրաշրջիկներու խուճ մը լե-
ռը տարած էր, դործէ քաշուելով՝ Լա-
րիսայի կողմերը բնակութիւն հաստա-
տեր և կալուածներ գներ է կ'ըսուի:

— Սեբասիա պիտի երթան ի մօ-
տոյ մի քանի բարձրաստիճան սպայք,
նահանգին վիճակին վրայ քննութիւն-
ներ կատարելու համար:

— Անսառաց եւ հանգաց վարչու-
թեան հասոյթն աւելցնելու խնդրով
կ'ըբաղի այժմ Եւմոսցոյցի յանձնաժո-
ղով:

— Էսկիեհիթէն ի Սէօյիւս խճուղի
կը շինուի:

— Մուսանիա-Պուսա երկաթուղոյ
գծին շինութիւնը աւարտելու մօտ լի-
նելով, Մուտանեայի գծին համար ա-
րագընթաց երկու նոր շոգեխաններ պի-
տի գնուին: Առ այժմ այդ երթեւեկու-
թիւնը պիտի կատարեն Պէնկազի ու
Էսթէմիս շոգեխանք: Այս շոգեխանուց
մեքենայք կը նորոգուին: Մէկ ամսոյ
մէջ գնացող ու դարձող ուղեւորաց ան-
ցագինը 100ին 25 պիտի գեղջուի:

— ՅԱրաքիւր 43 տեղէն վիրաւո-
րուելով սպաննուող ոստիկան Եուսուֆ
էֆէնտիին կնոջ դրամական պարգև մը
տալ հրամայած է Վեհ. Սուլթանը:

— Մաքսայից վերատեսչութեան պաշ-
տօնատան մէջ յատուկ վարժարան մը
պիտի հաստատուի, ուր նոյն վարչու-
թեան պաշտօնեայք պիտի ուսանին նոր
սակազնոց կիրառման եղանակը: Ու-
սուցիչ կարգուած է Զմիւռնիոյ մաք-
սային քննիչ Րիզա պէյ:

— Սուլթանիյէ վարժարանին ծրագ-
րոյն մէջ բարեփոխութիւններ ներմու-
ծելու համար յանձնաժողով մը կազ-
մուած է:

— Առեւտրական միջնորդ՝ Բօլիցա-
ճիւնէրու ու Գօմիսիօնճիւնէրու նման
յետ այսորիկ Առեւտրական և Հանրօ-
գուտ շինութեանց նախարարութեանէն
պիտի ստանան իրենց քէզիւրէները:

— Հանգանակութիւնք. — Թուրքիոյ
մէջ գտնուած մասնաւոր և ազգային
ոչ-մահմետական վարժարանաց ուսան-
բացը գոցելու նպատակաւ պարահան-
դէս, թատերական ներկայացումն և
կամ վիճակահանութիւն կազմակերպե-
լու համար՝ արտօնութիւն չպիտի կըր-
նայ առնուիլ այսուհետեւ, մինչև որ
վարժարանին գտնուած գիւղաքաղա-
քին կամ գիւղին կրթական յանձնաժո-
ղովներէն կամ տնօրէններէն առնուած
տեղեկագիր մը չներկայացուի կրթա-
կան նախարարութեան:

— Յուսուարին՝ մայրաքաղաքիս մէջ
1338 մահ պատահեր է, որոց 747ը՝ Իս-
լամ, 503ը՝ Քրիստոնէայ և 88ը՝ Հրեայ:

— Դեղագործաց համար յատուկ կա-
նոնադիր մը կը պատրաստուի այս պա-
հուս:

— Կարնոյ նահանգին Պայաղլիս գա-
ւառին մէջ գտնուած ձէլալի Աշիրէթի
մարդահամարի գործողութիւնը կատա-
րել սկսեր է Պայաղլիսի կառավարիչը:

— Խարբերդի Քեալթէ գաւառու-
կի Աշիրէթներէն ևս Համիտիյէ հեծե-
լագունդեր կազմելու արտօնութիւն
տրուած է ձեռնհաս իշխանութենէն:

— Բազմահարուածեան հրացան մը,
մէկ վայրկենի մէջ 30—40 փամբուշտ
արձակող, հնարեր է ի Ղալաթիա Մէհ-
մէտ աղա անուն հրացանագործ մը:
Մէհմէտ աղա այս պահուս գրադած է,
Վեհ. Սուլթանին հրամանաւ, այդ հը-
րացանին նմոյշները պատրաստելու:

— 8000 դրուշ իւրացուցեր է մայ-
րաքաղաքիս հեռագրական և թղթա-
տարական առաջին տնօրէն Լէպիպ էֆ:

— Վեհ. Սուլթանը հրամայած է վե-
րակազմել արդէն գտնուած մաքրա-
նոցներն և նշանակել տեղերն այն մաք-
րանոցներուն որք պիտի կառուցուին ի
Պասրա և Սուրիոյ ու Տրիպոլոյ կալգ
մը նաւահանգստաց մէջ:

— Պ. Նախկինաֆէր Զմիւռնիա ու-
ղեւորեցաւ՝ Գոսսապայի գիծը քննելու
համար:

— Վեհ. Սուլթանը Վիլէլմ կայսեր
նուիրած է պատկեր մը որ կը ներկա-
յացունէ Գերմանիոյ կայսեր այցելու-
թիւնն Տօլմա-Պահչի պալատան: Պատ-
կերին նկարիչն է կայս. Պալատան նը-
կարիչներէն Ժօղէֆ Մանաս էֆէնտի:

— Անսոնեան Մկրտիչ էֆէնտիին խնդ-
րած մենաշնորհին մերժուած լինելը
կիմանամք վերջին պահուն:

— Դօնեայի քաղաքին ու շրջակա-
յից մէջ հարսանիք երեան ելած է:

— Նաւահանգսի ոսիկանութիւնը
նախընթաց գիւղեր կը հալածէր մակոյկ
մը որուն մէջ կը գտնուէին երկու ան-
ճիւնք: Մակոյկէն մեծկակ արկղ մը ծո-
վը նետուեցու Լիման Օտասիի մօտե-

րը: Մակդին և մէջը գտնուող անձինք մինչև ցարդ չեն գտնուած: Ոստիկանութիւնը խուզարկութիւններ կատարել տալով Մալթայի լուղորդներուն, յաջողեցաւ գտնել արկղը, որ կը պարունակէր փախցուած ընկալիչներ:

— Արեւելեան երկաթուղեայ բաղադատման գաւառաց մէջ եւս վաճառումն թոյլատրել որոշած է Առևտրական նախարարութիւնը, ըստ Սապահի:

— Բերայի կառավարչատան առանդից սենեկին տակէն ծակուելով, 1500 զրու զողջուած, և սակայն գողը յայտնուած է Ոստիկանութեան նախարար Վսեմ. Նազըմ պէյի անձամբ կատարած քննութեանց շնորհիւ:

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

Իբր տասն օրէ ի վեր մայրաքաղաքս եկած է՝ էջմիածնայ Սինոքի անդամ Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոսի ամենամտերիմն, Պ. Ղազարոս Աղայեան:

Պ. Աղայեան եկած է խորհրդակցել Պ. Արփիարի հետ:

Պ. Աղայեան պարապ ժամանակ չանցուներ. եկեղեցական և աշխարհական կարևոր անձնաւորութեանց հետ մտերմական տեսակցութիւններ ունենալէ յետոյ, պիտի երթայ ի Ս. Երուսաղէմ, և անտի դարձեալ մայրաքաղաքս գալով, պիտի վերադառնայ իւր մտերմին մօտ:

Ջով որ տեսնելու կ'երթայ Պ. Աղայեան յերուսաղէմ, իբրեւ Ս. Լուսաւորչայ հաւատը պաշտող Հայ՝ խոնարհարար խորհուրդ կուտամբ նմա չխաբուիլ, որովհետեւ գործիք միայն և սանդուղը պիտի լինի առաքողին:

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Փետրվար 11, երեքշաբթի գիշեր, ի Գատըգիւղ մեծ նուագահանդէս մը պիտի տրուի, հրապուրիչ արուեստագէտ Պ. Վ. Սվաճեանի կողմանէ:

Նուագասէր հասարակութիւնը անտարակոյս պիտի փութայ ներկայ գըտնուիլ տեղւոյս համար եղական հանդիսի մը և ունկնդիր լինիլ աշխարհահռչակ երգահաններու հանճարեղ արտադրութեանց, զորս պիտի ածէ դաշնամուրի վրայ մեր Հայ արուեստագէտըն, նախկին աշակերտ Վիէննայի Գոնսէրվաթօրին:

ԲԺԻՇԿ ԿՈՒԶՈՒԻ

Ծովեզերեայ դաւառէ մը ճարտար բժիշկ մը կը փնտռուի: Պայմաններն իմանալու համար դիմել «Ծաղիկ»ի Խմբագրատունը:

ԿԱԹՈՂԻԿՈՍՍԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Քաղ. Ժողովոյ Ատենապետ Մաքսուտ Սիմոն պէյ և Ազգային Ժողովոյ Ատենապետ Նուրեան Յովհաննէս էֆէնտի առջի օր Պատրիարքարանի մէջ խորհրդակցելով, որոշեցին գաւառները ղրկել անմիջապէս՝ էջմիածնայ Ս. Սինոքի կողմանէ Պատրիարքարան հասած այն շրջաբերականները, որոցմով գաւառները կը հրաւիրուին մին եկեղեցական և միւսը աշխարհական երկու պատգամաւոր ընտրել ու ղրկել էջմիածին, յանուն գաւառին մասնակցելու համար Հայոց Ընդհանրական Կաթօղիկոսի ընտրութեան:

խորհուրդ կուտանք գաւառական ընտրուաց՝ իրենց խղճի թելադրութեան անստով կատարել քուէարկութիւնները, զգուշանալով ընտրելէ Պուսէն պաշտօնապէս ու անպաշտօն կերպով յանձնարարուած անձերը: Գաւառը ազատ են ընտրելու զով որ կամին: Ընտրեալը կրնայ լինիլ իրենց մէջէն կամ հեռաւոր քաղաքէ մը:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ԾԱՂԻԿ»

Ն. Օ. ի Շապին Գաւառիսար. — 1⁰ Պահարանի մէջ. — 2⁰ Թիւ 1,726,574: Ս. Մ. ի Մալկարա. — Ձեր կրկին անուաները չփոխութեան տեղի տուած էին: ուղղեցինք: — Կրնաք նամակադրուիլ ղրկել:

Կ. Ա. ի Հալէպ. — «Ծաղիկ»ի 16րդ թուոյն հրատարակուելէն յետոյ՝ ստացանք Ձեր 15/27ի նամակը:

Գ. Խ. ի Մոսկուա. — Այդ չորս գրքերն ի միասին կ'արժեն 12 ֆրանք՝ տուանց թղթատարի ծախուց: — Ձեր ուղածը ղրկուեցաւ:

Հ. Ընթ. Ը. ի Մաղնիսա. — «Ծաղիկ»ի յայտարարութեանց բաժնին մէջ կարդացէք այս մասին տպուած ծանուցումը: Դրամ կարող էք ղրկել կամ փոխանակազիր քաշելով և կամ յանձնարարեալ նամակով նամակադրուիլ ղրկելով:

Կ. Մ. ի Երևան. — Ստացանք չորս բաժանորդագիրը. հաճեցէք հաղորդել մեզ այդ չորս բաժանորդաց անունները:

Գ. Վ. Յ. ի Երուսաղէմ. — Ստացած և գանձած եմք փոխանակազիրը. յանձնարարութիւնք կատարուած են. հաշուեցոյցը յառաջիկայիս կ'ստանաք: — Յոյս չկայ:

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Ի ՆՊԱՅԻՆ ԳՈՒՓՈՅՆՆՈՐ ԲԵՆՈՑԻ

Տեղի պիտի ունենայ 1892 փետր. 9/21 կիրակի ցերեկ ի ժամ 8, Բերայի Աղջկանց Արուեստանոցի մեծ սրահին մէջ: Գին տոմսակի կէս Օսմ. ոսկի:

ՊԻՏԱՆԻ ԽՐԱՏՆԵՐ

Գինւոյ բնական գոյն. — Թէ որ ձեր գնած գինիին գոյնին վրայ կը կասկածիք, քիչ մաս մը տաքցուցէք անկից 90 Զերմաստիճանով և մէջը թաթխեցէք Զրով թրջուած բուրդի թել մը: Թելը դուրս հանելով երբ կը տեսնէք որ գունաւորեալ է, գիտցէք որ գինիին գոյնը բնական է. եթէ ոչ՝ արուեստակեալ է:

Յրեխածի համար օծանակ. — Ահաւասիկ օգտակար դեղագիր մը որ պիտի ծառայէ ձմեռնակի (engelure):

Արիտն	10	կրամ
Քալիուր (քեաֆիրի)	5	»
Անուշադրի բնածխատ	10	»
Կապարի քաջախատ	20	»
Խոզի ճարպ (axonge)	120	»

Այս ամէնն իրար խառնելով կը կազմուի օծանակ մը զոր պէտք է քսել ցուրտը խածած տեղուանքն:

Բիւրեղեայ եւ ապակեղէն ջրոյ շիւեքը մաքրել. — Առէք նոր թրջոց դրուած թէյի տերեւներ, քիչ մը Զրով ու դեղալ մը քաջախով խառն դրէք զայնս Զուրի սրուակին մէջ, ու յետոյ լաւ մը ցողուելով ցնցելէ վերջ, թափեցէք մէջինը և մաքուր Զրով ցողուեցէք:

Ականջի ցաւ. — Այս ցաւն ունեցողները կ'ըմբռնեն լաւ թէյ լոնջ անըմբերելի տանջանք մ'է այն: Այդ դաժան ցաւն ամոքելու համար պէտք է խիստ տաքցուցած վարսակի հատերով լեցուն քսակիկ մը դնել ախանջին վրայ. հարկ է մէկ քանի անգամներ փոխել քսակիկը՝ պաղելուն պէս: Այս մեթոտն իւր տեսակին մէջ միակն է որ կրնայ չուտով ցաւն անհետացունել:

Բրդեայ եւ մեծախեղ կերպաները լուալ. — Եօթը լիտր Զրոյ մէկ լիտր թեփ եփելու և լաթէ մ'անցունելու է. քամուած Զուրին մէջ պէտք է լուալ ֆուլարէ թաշկինակ, մետաքսէ չրջաղգեստ, գոգնոց, բաճկոնակ, ժապաւէն, ևն: Յետոյ հարկ է մետաքսեղէնները պարզ Զուրէ մ'անցունելով քամել, և տակաւին թայ վիճակի մէջ արդիւնէլ զայնս:

Թարգ. ԹԵՂԻՈՍ ԼԱՊՃԸՆՃԵԱՆ

Իւսկիւտար

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ			
Օսմ. լիւրան 100 գրշ. էն			
Մէքիտիէ	108	47	Վ. Երջայ 102 20
Քաւարդ մէքիտ	107	40	Բաւարդ 89 25
Մանր մէքիտ	102	40	Նաբալէան 87 47
Մէթալիք	98	30	Գրիֆից 51 40
Հինգեց	102		Անգլ. լիւրան 409 38
Մանէլի թղթագրամ 9 24			
Գանալիտէ	20	2	Բաւար. նրկ. 71 1/2
Թասգիլ. Օսմ.	74	32	Թասգիլէ 20 20

24)

ՄԵՌԵԱԼ ԿԻՆԸ

— Պարոն, ըսաւ, պատճառը սա է թէ Տիկինը հոգին աւանդելէ առաջ, խաչին վրայ երգում ընել տուաւ ինձ յաւիտեան պահել այս գաղտնիքը:

— Բայց վերջապէս... ո՛չ ինձմէ... ո՛չ ինձմէ...:

Եւ ես, իմ կարգիս, կը հարցափորձէի զնա, աչերս իւր աչաց մէջ յառած: Նախ վարանեցաւ, յետոյ թոթովեց:

— Զնամարիտ է... ձեզմէ պահելու չէր... քանի որ խեղճ կինը կը կարծէր...:

— Ի՞նչ, ի՞նչ կը կարծէր: Թէ ես տեղեակի էի...: Թէ ես մեղսակից էի... ըսէ՛:

Վիգթուառ խոնարհեցուց աչերը և չափաւարանեց:

— Ո՛հ, Աստուած իմ... միթէ կարելի է՞, Տէր Աստուած... Տեսնենք, նստէ հոս, սիրելի Վիգթուառ... հոս քովս... և խօսէ... ըսէ ինձ ամէն բան... ըսէ ինչ որ գիտես...: Առաջին անգամ երբ կասկած ունեցար...: Ո՞ր ժամանակ... որովհետեւ նա ժամանակէ մը ի վեր իրօք հիւանդ էր...:

— Այո, պարոն, բայց ոչինչ բան էր այն, վտանգաւոր հիւանդութիւն մը չէր... գիտէք թէ բժիշկներն այդպէս կը վկայէին, և ես այնքան սովոր էի զինքը դարմանելու որ էի կարող սխալ մը գործել...: Ա՛հ, գիտեմ ես երբ վտանգն հասաւ...: Պարոն կոմսն յիշելու է այն օրն յորում տիկին դքսուհին ի վալմուրիէ հասաւ և օրիորդ Սապինը Հիւանդելու համար մարդ զրկուեցաւ: Այդ օրէն ի վեր, պարոն, ապահով եմ որ նա սկսաւ չարութիւն ընել... այդ օրէն ի վեր էր որ տիկնոջ ցաւերն յանկարծ սաստկացան, և մեծ փոփոխութիւն կրեց իւր առողջական վիճակը...: Կասկածած էի ես և սկսայ հսկել այդ աղջկան վրայ...: Երեկոյ մը, պահուած այն փոքրիկ առանձնասենեկին վարագուրին ետեւ... սենեկին մօտ... ուր դեղորէից պատրաստութիւնը կը կատարուէր, տեսայ որ Սապին գրպանէն շիշ մը հանեց և մէկ երկու կաթիլ դրաւ տիկնոջ խմելիք դեղին մէջ: Յանկարծ վարագուրը քաշեցի և ինքզինքս յայտնեցի:

« — Ի՞նչ է այդ, օրիորդ, ըսի:

« — Շատ կարմրեցաւ, բայց իւր բոլոր պաշարիւնութեամբ սա պատասխանը տուաւ ինձ:

« — Հօրեղբայրս ինձ պատուիրած է այս քանի մը կաթիլները դնել վալմուրիին մէջ...:

« Այս էր իւր պատասխանը և այժմ պիտի ըմբռնէք, պարոն, թէ նա կը ստէր...: — Երբ այսպէս զինքը յանկարծակի բերի, դուցէ չափազանց ուշ էր արդէն... քանզի առաջին անգամը չէր անշուշտ որ նա այս չարիքն ի գործ կը դրնէր... առաջին գաղափարս եղաւ ձեզ իմացնել... չհամարձակեցայ... բայց Տիկինին իմացուցի... Ո՛հ, ինձ թուեցաւ թէ նոր բան մը չէի յայտնէր տարաբաղդ կնոջ... և սակայն նա կշտամբեց զիս գրեթէ խտուրթեամբ...:

— Դա՛ զիտես, ըսաւ ինձ, թէ ամուսինս միշտ ներկայ է երբ Սապին դեղերը կը պատրաստէ... ուրեմն ինքն ալ մեղսակից եղած պիտի լինի... հարկւր անգամ աւելի լաւ է ինձ իւր ձեռքովը մեռնիլ քան թէ այդպէս հաւատալ...:

« Եւ, քաջ կը յիշեմ, Պարոն, թէ այն վայրկեանին իսկ երբ զայս կ'ըսէի ինձ, դուք փոքրիկ առանձնոցէն դուրս կ'ենէիք և գաւաթ մը մրուան (վալմուրի) կը ներկայացընէիք նա... Այլիք ահաբեկ հայեացք մ'արձակեց վրաս, — և խմեց... Մի քանի վայրկեան վերջ ինքզինքն այնքան գէշ

զգաց որ կարծեց թէ արդէն վերջի վայրկեանն էր...: Իւր խաչն ուզեց, և երգումն ընել տուաւ ինձ որ բառ մ'իսկ չը յայտնեմ...: Այն ատեն էր որ մարդ զրկեցի քահանայն կանչելու...: Երբ ամէն ինչ վերջացաւ, Պ. Թալլըվօ... որ, կը յիշէ՞ք, պարոն, յանչափս զարհուրեցաւ հիւանդին քով հասած միջոցին... Պ. Թալլըվօ հարցափորձեց զիս. ըսի իւրեն թէ այն կաթիլները զորս ինքը տուած էր օրիորդ Սապինի՝ ըմպելի դեղերուն մէջ խառնելու համար, երևի շատ գէշ ներգործած էին հիւանդին վրայ...:

« Ի՞նչ կաթիլ, ըսաւ ինձ, խօսք չհասկցող մարդու մը պէս...:

« Այն կաթիլները, պատասխանեցի, զորս օրիորդ Սապին իւր հետ բերած էր փոքրիկ դորշ շիշի մը մէջ...:

« Բոլորովին աժդուհեցաւ խեղճ տօքթէօրը, մոլորեալ աչօք վայրկեան մը ինձ նայեցաւ, գլուխն երեքցուց նման մարդու մը որ ինչ ըսելիքը չգիտէր և իսկոյն հեռացաւ քովէս... և երբ հետևեալ օրն իմացայ թէ նա մեռած էր, ըսի իւրովի:

« — Խեղճ մարդն... սպաննած է՝ ինքզինքն...:

« Ահա, պարոն, ինչ որ գիտեմ, ինչ որ իմ աչերը տեսան... և կ'երգում ձեզ յանուն Աստուծոյ թէ ինչ որ ձեզ յայտնեցի, զուտ ճշմարտութիւնն է...:

Վիգթուառ դադարեցաւ խօսելէ...: Չկարողացայ պատասխան տալ նմա, բռնեցի նորա խորշովեալ և դողդոջուն վտիտ ձեռներէն, ձակտիս դրի և մանկան մը նման արտասուեցի:

Ապրիմ թէ մեռնիմ, պէտք է որ աղջիկս երբեք յարարերութիւն չունենայ այս թշուառական կնոջ հետ: Եթէ կեանքս երկարի, ես կ'ստանձնեմ այդ պարտականութիւնը, իսկ եթէ մեռնիմ, պէտք է որ ուրիշ մը յանձն առնու զայն: Ամենէն ապահով նախազգուշութիւններն ի դործ կը դնեմ, որպէս զի այս կնոջ, երբ դադրիմ ապրելէ, աղջկանս հօրեղբօր՝ տը Գուռթիշօզ երէցին ձեռքն անցնին, և կամ, եթէ նա եւս մեռած լինի, իւր մօրեղբօր՝ տը Գուռթիշօզ հրամանատարին ձեռքն: Այս և յառաջագոյն գրուած տողերէն ըստ բաւականին պիտի ըմբռնեն ինչ որ կ'ակնկալեմ իրենցմէ:

Սապին Թալլըվօի հետ իմ ամուսնութեան պայմանագրովս, իւր ցկեանս զիւրակեցութեան համար, լիապէս շնորհեցի իրեն ամէն ինչ, ապահովեցնելով նմա՝ վայելումն անձնական հարստութեանս կիսոյն, հարստութիւն որուն տէր կացուցի աղջիկս, արդէն իսկ հարուստ մօրենական ժառանգութեամբ: Այսպէս չէի կարծած զգալապէս միասած լինել աղջկանս շահուն: Եւ սակայն, չարաղտ սիրոյս տեղի տալով, աւելցուցի պայմանագրին մէջ յօդուած մը որով բովանդակ հարստութիւնս Սապին Թալլըվօ պիտի ժառանգէ, եթէ աղջիկս մեռնի առանց ամուսնացած լինելու: Ուրեմն ամբարշտ կնոջ մը բարոյական ապականութեան դէմ չէ միայն որ հարկ է պահպանել աղջիկս, այլ նաև հարկ է ապահովել զնա ոճրագործ կնոջ մը ճիրաններէն:

Գալով իւր գործած առաջին ոճրին, պարտիմ բացատրել թէ ի՞նչու չեմ պատժել տար զինքն ըստ օրինի: Անձնական յիշատակներս, պառաւ Վիգթուառի յանչափս ճգրիտ վիշալութիւնը, տօքթէօր Թալլըվօի անմիջական և խորհրդաւոր մահն, և վերջապէս, Սապին Թալլըվօի սկզբանց և վարդապետութեանց մասին քաղած ծանօթութիւններս, ոճրին իրականութեան վրայ ամենափոքր տարակոյտ մը իսկ չեն թողուր այլ եւս: Եւ սակայն, եթէ անպատիւ կը թողում գինքն, անոր համար չէ որ տեղի կուտամ (որքան ալ ահռելի լինի այս մտածումը) այն մեղսակցութեան ամբաստանութեան առջեւ զոր մեղապարտն անշուշտ պիտի ծանրացնէ վրաս, այլ վասն զի հոգեով և խղճով համոզուած եմ թէ

ոճրին ապացոյցներն՝ օրինական տեսակէտով՝ անբաւական են: Թոյնը, — քանի որ պէտք է արտասանել այդ չարաշուք բառը, — բաւական գիտակցութեամբ ընտրուած էր՝ որ և է հետք չթողլոյ համար: Վկայութիւնն Վիգթուառի, որ յանձնախմբի սերտիւ կ'ապրուած էր առաջին կնոջ հետ, և, բնականաբար, այնքան թշնամական զգացմամբ՝ երկրորդին հետ, կ'ասկածանաց տեղի պիտի տար: Գալով անձնական համոզմանս մասնաւոր փաստերուն, որքան ալ հզօր լինին, չպիտի կրնան իրիւ հիմն ծառայել եղբորական ամբաստանութեան մը: Այս դատը պիտի ծառայէ միայն յառաջ բերելու սոսկալի գայթակղութիւն մը որ ուրիշ արդիւնք չպիտի ունենայ եթէ ոչ անպատուել անունս, — աղկանս անունը:

Ինչ որ կարեւորն է, — պէտք է ըսեմ՝ ինչ գիտով ալ լինի, — այս կինն ընդ միշտ հեռացնելն է Բարիդէն և Յրանսայէն: Այս նախատակին հասնելու համար՝ պէտք չէ դրամական մեծ զոհողութիւն մ'ընելէ վախճալ: Նա կը սիրէ դրամը: Սպառնալիքը միացնելով դրամին, կը յուսամ թէ կարելի պիտի լինի համոզել զինքն: Ինքս իսկ կը մտածեմ ընել առաջին փորձն երբ բաւական կ'ազդուրիմ և պաշարելուութիւնս վերստանամ՝ իւր ներկայութիւնը հանգուրծելու համար:

Այս վատը ամէն պատիժէ խոյս պիտի տայ... Իրեն նման շատեր անշուշտ խոյս կուտան այսպէս...: Եւ դեռ շատեր մանաւանդ պիտի խոյս տան ապագային մէջ...: Քանի մարդկային կիրքերն, — և մանաւանդ կնոջ ահեկի կիրքերն, — իւրեանց նախկին թուամբերը խորտակեն և օրինագիրքէն դատ ուրիշ օրէնք և սանձ չընդունին, — գիտութեան յառաջագիմութիւնը անհունս պիտի բազմապատկեն օրինագիրքը խաբելու և արդարութիւնը կուրացնելու միջոցները:

40 Մայիս.

Ալիէթ մեռած է զիս մեղաւոր կարծելով...: Զարհուրելի գաղափար մ'է այս...: Ձեմ կարող իսկ այս կէտին վերայ խորհիլ...: Այնքան վտիտ, այնքան սիրեցեալ, այնքան փափուկ արարած մը... այս՝ նա ըսած է իւրովի. «Ամուսինս մարդասպան մ'է... Թոյն է ինձ տուածը, Թոյն է, և ինքը գիտէ զայս...»: Եւ նա մեռած է այս մտածումով... որ իւր վերջին մտածումը եղած է...: Եւ երբէք, երբէք չպիտի գիտնայ թէ սխալ է իւր կարծիքը... Թէ ես անմեղ եմ... Թէ այս գաղափար կը հիւծէ զիս... Թէ ես աշխարհիս թշուառագոյն էակն եմ...: Ո՛հ, ամենակարողդ Աստուած, — եթէ գոյութիւն ունիս, — կը տեսնես անշուշտ թէ որքան կը տառապիմ... Գիթա՛ իմ վրաս:

Ա՛հ, որքան պիտի ուզէի հաւատալ թէ տակաւին ամէն ինչ վերջացած չէ իմ և Ալիէթի մէջ...: Թէ նա կը տեսնէ զիս... կը լսէ զիս... և գիտակ է ճշարտութեան:

Բայց չեմ կարող հանգուրծել այս վիճակին, չեմ կարող:

4 Յունիս.

Գիտեմ թէ ինչ կ'ըսեն աղօթքի մասին, — թէ անօգուտ է այն, — թէ միշտ և անհրաժեշտաբար անգոր է, քանզի Աստուած, եթէ կայ, և ինչ ալ լինի, մասնաւոր ներգործութեամբ մը բնաւ չմիջամտեր աշխարհիս գործոց, թէ նա չկառավարեր հրաշքներով, ընդհանուր կարգը չխանգարեր բնաւ անհատական չահու մը համար...: Անտա՛րակոյս, բայց այսպիսի կարծիք մը չատ խիստ և կարի համարձակ կը թուի ինձ: Նախ, նա որ կը հաւատայ Աստուծոյ և կ'աղօթէ նմա, նորա հետ առաւել ուղղակի հաղորդակցութեան մէջ զգալու է իւր անձը և գտնելու է նոյն իսկ այս զգացման մէջ ասպաւն մը և անհամեմատելի մխիթարութիւններ...:

Բայց արդեօք այդքան ստոյգ է թէ աղօթքն անգոր է միշտ: Ի՞նչէն գիտեն: Եթէ կան ստուգիւ յիմարական աղօթքներ, որք չեն կրնար ընդունուիլ առանց խառնակելու տիեզերաց աստուածային կարգադրութիւնը, միթէ Աստուած չէ՞ կարող իւր անխախտ օրինաց մէջ աղօթքի համար ալ ազատ ասպարէզ սահմանած լինել: Առանց իւր սեփական օրէնքը զեղծելու, և առանց հրաշքներ գործելու, միթէ չէ՞ կարող ներգործել մտածման և կամաց վրայ անոր որ յինքն կ'ապաւինի...: Մայր մը որ կ'աղօթէ իւր հիւանդ որդւոյն համար, չէ՞ կարող յուսալ թէ իւր որդին պիտի բժշկուի ո՛չ թէ հրաշքով, այլ իւր անհատական խնամօք՝ Նախախնամութեան կողմանէ իրեն ներշնչուած և ուղղուած...: Մարդ մը որ կը խնդրէ Աստուծմէ հաւատք ներշնչել իրեն, լուսաւորել զինքն իւր շնորհօք, միթէ բնութեան կարգը խանգարել կը խնդրէ իրմէ, և չէ կարող յուսալ՝ ընդունիլ այն լոյսը զոր ի սրտէ կը հայցէ...:

Յունիս.

Իւր յետին մտածումն է եղած թէ ես ոճրագործ մ'եմ. և երբէք կարելի չպիտի լինի այդ սխալանքէն զինքն ազատել...: Ամէն ինչ լաւ կը վերջաւորի՝ երբ մարդ կը մեռնի...: Ամէն ինչ իւր տարերց կը դառնայ...: Ի՞նչպէս ուրեմն հաւատալ անձնական յարութեան հրաշքին... և սակայն, էպպէս, ամէն ինչ հրաշք և գաղանիք է մեր շուրջը, մեզմէ վեր, մեր մէջն իսկ...: Տիեզերք համայն ոչ այլ ինչ են եթէ ոչ տեւողական հրաշք մը:

Միթէ մահուան գրկէն մարդուս վերածնութիւնը առաւել նորանշան և առաւել անըմբռնելի գաղտնիք մը պիտի լինի՞ քան իւր ծնունդն կնոջ արգանդէն...:

Վերջին տողերն են ասոնք զորս Պեռնաու տը Վօտուիգուու ի գիր առած է: Իւր առողջութիւնն, ի վաղուց վըշտերով խանգարեալ, չկարողացաւ գիմադրել իւր վրայ ծանրացող ահեկի և գերագոյն փորձին: Հազիւ հասկցուած ախտ մը, որոյ արտաքին նշանը եղաւ անթուաքս (շէքէֆէն) մը վզին վրայ, մի քանի օրուան մէջ մահացու երեւոյթ մը առաւ:

Պ. տը Վօտուիգուու իւր մօտալուտ վախճանն զգալով, իւր քով կանչել տուաւ տը Գուուի-Հէօզ երէցը, Ուզեց մեռնիլ Ալիէթի կրօնքին մէջ:

Ի կենդանութեան, խեղճ կինն յաղթուած էր. կը յաղթանակէր յետ մահու:

Յ. Գ. — Աւելորդ է ըսել թէ այս պատմութեան մէջ, յօրինեալ ըստ վաւերական յիշատակարանաց որոց կարեւոր մասերը խնամով յառաջ բերուեցան, հարկ եղաւ՝ այսու հանդերձ՝ մի քանի ծանր իրողութեանց պատճառաւ, անուանց, թուականաց և տեղոյ փոփոխութիւններ ներմուծել: Աւելորդ է իսկ ըսել թէ ի լոյս ընծայած չպիտի լինէինք զայն, եթէ օրագրին երկրորդ մասին մէջ տիկին տը Վօտուիգուու անուամբ ի հանդէս եկող անձը, բաւական երկար ժամանակէ ի վեր անհետացած չլինէր Բարիդէն՝ իւր արկածալից կեանքն երթալ վերջացնելու համար Յոանսայէ հեռի:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԹԵՅԵՐՈՒ ՆԻԳՕԼԱ ԵՒ ԲՕԼ ՍՄԻՐՆՕՅ ԵՂԲԱՐՑ

Ղալաթիա, Ռուսական վանքին դիմաց, Այնիգօլա եկեղեցւոյն մօտ, Թիւ 30

Վաճառատունս՝ անցեալ տարւոյ Մայիսի սկիզբները բացուած լինելով, վաճառելի թէյերու տեսակներն եւ գիններն ի ստորեւ նշանակեալ, կը ծանուցանէ ի գիտութիւն յԱրգոյ հասարակութեան։

Թիւ 1. Լիանսին	Ֆունթ 32	Դահեկան
» 2. Չիսական վարդ	» 30	»
» 3. Պուքէ Էմբէրիալ	» 26	»
» 4. Ֆուչէֆու	» 20	»
» 5. Տնական թէյ	» 16	»
» 6. Խնայողական տեսակը	» 12	»

Վերոյիշեալ թէյերը՝ մէկ, կէս եւ մէկ չորրորդ ֆունթնոց (133 տրամ) ծրարներու մէջ ամփոփուած՝ մետաքսեայ եւ կապարեայ թղթով պատած, իրենց վըրայ կը կրեն վաճառատան կնիքն եւ ստորագրութիւնն։ Սոյն թէյերը չաւրուելու համար մթերանոցին մէջ մասնաւոր տեղ մը գրաւած են, ուր արգելուած է նոյն իսկ ծխելն։

ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂՇԵՐԷՆ

Անոնք որ կրնան որոշել թէյին լաւն ու վատը, կարող են իրր նմոյշ գնել վաճառատունէս փոքր ինչ եւ փորձել։ Վաճառատանս միւս ճիւղն, որ ի Ռուսիա աշխարհածանօթ է արգէն։

Սոյն թէյեր կը վաճառին նաեւ ի Բերա, Թիւնելի դիմաց Ֆրաթէ վաճառատունը, Պոլիս Պահճէ գաբու Շէյիսիւլիսլամ խան թիւ 2 Միւսիւ Նիքիթիչ Էրպէնկին մթերանոցը, Օրթադիւլ Թաշ Նէրտիւպան փողոց թիւ 5 Պ. Գրիգոր Միսկիճեանի դեղարանը, Իւսկիւտար Թաշ Տէմիրճիլէր փողոց թիւ 25 Միւսիւ Աքէստօրիտիսին դեղարանը եւ Գատըգիւլ Նպարաւաճառ Բարաթանասիօնի մթերանոցը թիւ 19։

(12—18)

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

Ա. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.

Պանֆէ—Գաբու, ձէլալ պէյ խանի դրան կից, Թիւ 10

Ձմեռուան առթիւ սոյն հանրածանօթ վաճառատան մէջ պատրաստ կը գըտնուին Չինեւ եւ Ճապոնի ուղղակի հասած նոր բերք՝ զանազան տեսակ գերընտիր եւ ազնիւ ու անուշաբոյր ամէն ճաշակի յարմար։ — Ծաբնական, Չինական եւ Հնդկական այլ եւ այլ մեծութեամբ եւ ձեւերով թէյի տուփեր, գեղակերտ եւ նկարազարդ Յաճախորդաց — գոհացում տալու համար բնաւ Զանք չխնայուիր։ — Յանձնարարութիւնք կը կատարուին փութով եւ ճշգրտութեամբ։ — Գինները որոշ եւ խիստ չափաւոր։ — Չիք սակարկութիւն։

1—4

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՅ

135րդ ՎԻՃԱԿԱՀԱՆ ՈՒԹԻԻՆԸ

Տեղի պիտի ունենայ յառաջիկայ մարտի 19 ին։ Մեծ պարգեւն է

600,000 ՅՐԱՆԲ ԿԱՄ **30,000** ԳԱՂ. ՈՍԿԻ

Պիտի շահին 600 անձինք։ Ամենէն փոքր պարգեւն է 400 ֆրանք։ Բաղդատումք վաւերացեալ են Օսմանեան առեւտրական նախարարութենէն։

Գին քաղդատումսի 7 1/2 դրոշ։

Գաւառներէն ստանալ ուղղունքը պէտք է դիմեն ԾԱՂԻԿԻ Յանձնակատարութեան Գրասենեկին։ Փօստի ծախուց համար պէտք է ղրկել մէկ ղրուշ աւելի։

Շահող թուոց ճիշդ ցուցակը կը հրատարակուի ԾԱՂԻԿԻ մէջ։

ԿԻՒՆ ՏՕՂՏՈՒ

Սուլթան համամ, Ֆնտղեան խան, 41 Եւրոպայէն նոր բերուած հետեալ ապրանք կը վաճառուին 12 ղրուշ 30 փարսյի։

1 Գծաւոր բրդեայ արանց ֆանելա։
3 Ձոյգ կապարապոյն բրդեայ արանց ֆանելա։

1 Հատ գունաւոր բրդեայ կանանց ֆանելա։

2 Ձոյգ կապարապոյն բրդեայ կանանց գուլպայ։

1 Հատ Բրօֆ. Ժաքէրի դրութեամբ ներքնաշապիկ։

1 Հատ Բրօֆ. Ժաքէրի դրութեամբ ներքնաւարտիք։

1 Անգղ. կտաւ օձիքով ու թեւոցով արանց շապիկ։

3 Արանց շապիկ նորածեւ ճերմակ կուրծք։

6 Արանց շապիկի նորածեւ օձիք։

3 Ձոյգ քթանէ շապիկի թեւոց։

1 » մէջը ֆանելայով ձեռնոց։

1 Հատ գունաւոր արանց ֆանելայ վարտիք։

1 Հատ բրդեայ կանանց ուսնոց։

1 » բուրգէ հիւսուած կանանց ծածկոյթ։

1 Հատ գունաւոր բրդեայ տղոց շորջազեռ։

1 Հատ բրդեայ տղոց բաճկոնակ։

2 » ամենալաւ տեսակէն մետաքսեայ փողկապ։

12 Հատ գունաւոր կամ ճերմակ քթան թաշկինակ։

6 Հատ գունաւոր երեսի սրբիչ։

4 » կարմիր գծաւոր խաւու։

3 » շատ մեծ ոտքի խաւու։

4 Հատ ծայրերը գունաւոր ծաղկենկար քթան խաւու։

3 Հատ ծայրերը շինուած լաւ քթան խաւու։

6 Հատ գունաւոր քթան՝ սրբիչ։

1 » մետաքս կամ բուրգ կանանց լասթիքի ֆանելայ։

1 Ձոյգ շատ երկայն անգղ. շղարչէ վարապոյ։

1 Հատ մետաքս տուփի մէջ 2 լավանտա, 1 օճառ, 1 օտըքօլոններ։

6 Հատ շուրջը գունաւոր կանանց քթան թաշկինակ։

4 Հատ լաւ տեսակ արանց քթան թաշկինակ։

6 Հատ շուրջը անթիքայով ճերմակ կանանց թաշկինակ։

6 ծաղկենկար տամասէ անձեռոց։

1 Հատ ծոպերը շինուած 8 հոգինոց սեղանի ծածկոց։

6 Անգղ. արծաթէ սպուրի դգալ։

3 Հատ դանակի 3 պատառաքաղ։

2 » գոյնգոյն խմայի ֆանելայ։

2 Ձոյգ գծաւոր բրդեայ կանանց գուլպայ։

3 Հատ շորի մետաքսէ գունաւոր թաշկինակ։

2 Հատ շատ մեծ քթանէ խաւու։

2 » լաւ տեսակ դգալ մետաքս թաշկինակ։

6 Հատ Անգղ. արծաթէ սուրճի կամ անուշի դգալ։

3 Բրդեայ լասթիքի տղու գուլպայ։

Յանձնարարութեան համար պէտք է գրել «Մաղիկի» Յանձնակատարութեան Գրասենեակին։

5—12

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԻՆ ՏԵՍԱԿ ԳԱՇՆԱԿԱՑ
ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

Վկայեալ դաշնակայարդար էՌԱՌԻ
հռչակաւոր գործատան

Գնումն եւ վաճառումն
Փոխանակութիւն հին դաշնակաց հետ

Կը վաճառուին ամէն տեսակ դաշ-
նակներ աւանական վճարմամբ և մասնա-
ւորաբար Գաղղիոյ լաւագոյն գործա-
րաններէն Քլէնի դաշնակները, խիստ
գիւրամատչելի գիներով:
Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն
գործարանաց դաշնակներէն կը բերուին:

Վարձու նոր դաշնակներ չափաւոր
գիներով:

Բաժանորդագրութիւն դաշնակաց
յարդարման (accord):

Դաշնակաց նորոգութիւն, գաղղիական
ընտիր նիւթեղէններով:

ՀՐԱՀԱՆԳ դաշնակները չհինցնելու
և լաւագոյն վիճակի մէջ պահելու:

Գաւառներէ եղած յանձնարարու-
թիւնք ամենայն խնամով և փութով կը
կատարուին:

Անմրցելի աժանութիւն

Աւելի մանրամասնութեանց համար
գլխէլ Բերա, Մեծ-Փողոց, Ղալաթա
Սարայի գիմաց, Խրիսթաքի խան,
Թիւ 10: (17—30)


ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

✱ ԿԱՄ ✱

ԱՌԱՋՆՈՐԴ

ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼ ԱՆՁԱՆՑ

Հասցեակիր
Ե. ԳԱՂԱՅԱՆ



Փարսկա
ՅԱՊԱՆ

ՏՊԱԳՐ. Գ. ՊԱՂՏԱՏԵԱՆ

— (Դիւն 5 Դր.) —

Ճրանայի թշկալիցն համայնաբանէն՝ համ-
բաւաւոր Տօր. Բլէմանի սոյն հետաքրքրաշարժ
եւ ընտիր երկաթիւնիւն հայերէն մաքուր
աշխարհաբարի մարգմանութեամբ, բարոյական
բազմաթիւ դասերով արդարեւ մանկագին ծա-
նայութիւն մը պիտի մատուցանէ այն ամէն ան-
ժանց, որք ամուսնական խորհրդաւոր կենաց
մէջ մտնելու մտադիր են եւ կամ մտած, նաեւ գի-
տական եւր ճշմարտութիւններով պիտի ցուցնէ
Թէ՛ ապագայ ամուսինը ինչ պարսին պիտեալ
իրենց ամուսնութեան նախընթաց օրը, եւ այ-
նուհետեւ, նաեւ՝ Թէ՛ ոչք են այն անմիջական
դարմաններն, հարկաւոր՝ կատարեալէն բու-
ժեցու ամուսնական հակառողջապահիկ զեղծ-
մանց ճխուր եւ ցաւալի հետեւանքները:
Կեդրոնացեալին է Ջարդարեան գրաստն, կը
գտնուի նաեւ բոլոր Հայ գրաւաճառաց քով:

ԱՔՏՈՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՑԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի-Ջապթիէ փողոց, թիւ 61

ՅԱՆԷԼԱ ԱՊՐԱՆԱՑ ՀԻՒՍԱՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՍԼԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Ի Մամուլ տ փաշա, Գիւրքնի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնագիւղն է
Ի Պահէյ—Գաբու, Մաքսատան կարգ, Թիւ 44 Թօհաֆիյէի վաճառատունը:



Թէ՛ մեծ եւ Թէ՛ փոքր քա-
նակութեամբ՝ արանց, կանանց
և տղայոց համար՝ անխառն
բրդէ, մանածէ, ևայլն, ուղ-
ուած Թանձրութեամբ և ուղ-
ուած չափով յանձնարարու-
թիւնք կ'ընդունուին ու պատ-
րաստ կը ծախուին Փանէլա
չապիկներ, վարտիքներ, մի-
սոցուներ, ևայլն: Ապ-
րանքները կը մրցին եւրոպա-
կաններուն հետ Թէ՛ աժանու-
թեամբ, Թէ՛ դիմացկունու-
թեամբ և Թէ՛ իրենց նուրբ
ճաշակով: Յաճախորդք ամէն
կերպիւ գոհ պիտի մնան:

15—24

Մոշրատեան Մկրտիչ եւ Յովհաննէս եղբարց վաճառատունք

ԵՐԿԱԹԻ, ԽՈՒՐՏԱՎԱԹԻ, ԳՈՐԾԵԱՑ ԵՒ ԱՅԼՈՑ

Կ. Պոլիս, Ալանա Համամ, Թիւ 44 եւ Ղալաթիա, Բերշէմպէ բազար,

Մամուլ տիցէ—ձատտէսի, Թիւ 70 եւ 59:

Անգղիական, գաղղիական և ամերիկեան կարեւոր գործարանաց մէջ պատ-
րաստեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ռուսական կախիակաղաղք (ասմա քիլի-
տի), հիւսան (տիւլկէր) գործիներ, եկեղեցական զանգակք, խարտոցք, զինկոյց
ամաններ, գործարանաց վերաբերեալ մեքենայք, երկրագործական բազմազան
գործիներ, ևայլն, ևայլն, ամենքն ալ շատ աժան գններով: Ընկերութեանս մե-
քենագործն դիւրութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար:
Կ. Պոլսէ և գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք շուտ և կանո-
նաւոր կը կատարուին: Մեր քով չգտնուածներն ալ յանձնորդէքով եւրոպայէ բե-
րել կուտանք և ուղուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք:

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝
Մ. Յ. ՄՈՒՐՏԱՏԵԱՆ ԵՂԲԱՐՑ
13—24 70, Եօրկանճըլար ձատտէսի, Ղալաթիա, Կ. Պոլիս

ԱՆԱՊԱԿ ԳԻՆԻ ԳԱՐԹԱԼԻ

ԽԱՎԵԱՐ — ԽԱՆ, ԹԻԻ 91

Վերջին ժամանակներս գինեչինութեան արդիւնաւորութեան վրայ յաճախ
կը գրուին տեղական ազգային և օտարազգի լրագրաց մէջ, և գոհութեամբ կը
չեշտուի սոյն ձեռնարկին մասնագէտ համարուող Սուքիասեան Յակոբ էֆէն-
տիի անունը, որ իւր երկարամեայ փորձառութեամբ՝ Գարթալի զանազան խա-
ղողներէ՝ ունեցած սեպհական և չրջակայից այգիներէն անձամբ կը պատրաստէ
ընտրեալագոյն և անարատ գինիներ, որոց մէջէն յատուկ գնահատութեան ար-
ժանի են՝ ԳԱՐԱ—ՉԱՎՈՒՇ, ՀՕՐԱ, ՀԱՃԻ—ՕՂԼՈՒ, ԲԷՉԻ—ՄԷՄԷՍԻ և ՆՈՒՐ-
ՆԻԿԵԱՐ խաղողներէն՝ սեւ գինի, ինչպէս նաեւ ՄԻՍԲԷԹ—ՉԱՎՈՒՇ, ԳԱՌԱ—ՉԱ-
ՎՈՒՇ, ՆՈՒՐՆԻԿԵԱՐ և ԳԱՐՈՒ—ՏԱՂԻ ըսուած խաղողներէն՝ ձերմակ և Թէ՛ ա-
նոյշ գինիներ, որք մայրաքաղաքիս առաջնակարգ բժշկաց կողմէ եւս կը յանձնա-
րարուին ամեն կարգի հիւանդաց: — Կը ծախուին շիշով պատրաստ, նաեւ քա-
շով և տակառով: Յատկապէս յանձնարարելի են մեծածոխ սեղաններու և խրախ-
ձանաց հանդէսներու ու շքասեղաններու համար:

15—15